ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՁԵՌՆՈՂ

«ԿԱՊԻՏԱԼ ԴԻԶԱՅՆ» ՍՊԸ

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ

Է. ԴԱՎԹՅԱՆ

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԱՆԱՀԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

(Լրամշակված)

Կատարող՝

«Թրիգգեր» ՍՊԸ տնօրեն Ա. Պեպանյան

ԵՐԵՎԱՆ - 2025

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ 2

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 3

ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ և ՏԵՐՄԻՆՆԵՐ 4

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 9

ՈԼՈՐՏԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԸ 11

ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ 19

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ 48

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ 72

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ 84

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 91

Հավելված 1. Հողամասի կոորդինատներ 92

Հավելված 2. Հանրային քննարկման արձանագրություն, մասնակիցների ցանկ և նկարներ 93

Հավելված 3. Ավագանու՝ գործունեությանը նախնական համաձայնություն տալու մասին որոշման պատճեն 96

Հավելված 4. Հանրային քննարկման թերթի հայտարարությունը 97

Հավելված 8. Շինարարական աշխատանքների ժամանակացույցը 98

Հավելված 10. Շինարարական աշխատանքների կազմակերպման հատակագիծ 99

Հավելված 11. Ծառահատման թույլտվություն 100

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ծրագրի անվանումը	Մինչև 2026 թվականը կառուցվող, հիմնանորոգվող կամ վերակառուցվող 300 դպրոցներ
Պատվիրատու	ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ (ՀՏԶՀ)
Նախագծային կազմակերպություն	«ԿԱՊԻՏԱԼ ԴԻԶԱՅՆ» ՍՊԸ, հեռ.՝ +374 98127677 էլ. հասցե՝ capital.project@hotmail.com
ՇՄԱԳ Հաշվետվություն կազմող	«ԹՐԻԳԳԵՐ» ՍՊԸ, հեռ.՝+374 94 40 47 34 էլ. հասցե՝ triggermonitoring@gmail.com
Կառուցապատվող տարածքի գտնվելու վայրը	Լոռու մարզ, Ալավերդի համայնք, Սանահին բնակավայր
Ընդհանուր կառուցապատման մակերեսը	8180քմ
Հողատարածքի մակերեսը	1.61 հա
Կրթահամալիրի նախագծային հզորությունը	200 աշակերտի համար նախատեսված դպրոց և 40 երեխայի համար նախատեսված մանկապարտեզ

ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ և ՏԵՐՄԻՆՆԵՐ

Ներկայացվող սահմանումները և եզրույթները /տերմիններ/ բերվում են ՀՀ բնապահպանական ոլորտի օրենքներից և նորմատիվ փաստաթղթերից:

Շրջակա միջավայր՝ բնական և մարդածին տարրերի (մթնոլորտային օդ, ջրեր, հողեր, ընդերք, լանդշաֆտ, կենդանական ու բուսական աշխարհ, ներառյալ՝ անտառ, բնության հատուկ պահպանվող տարածքներ, բնակավայրերի կանաչ տարածքներ, կառույցներ, պատմության և մշակույթի հուշարձաններ) և սոցիալական միջավայրի (մարդու առողջության և անվտանգության), գործոնների, նյութերի, երևույթների ու գործընթացների ամբողջությունը և դրանց փոխազդեցությունը միմյանց ու մարդկանց միջև.

Շրջակա միջավայրի վրա ազդեցություն՝ հիմնադրութային փաստաթղթի գործողության կամ նախատեսվող գործունեության իրականացման հետևանքով շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա հնարավոր փոփոխությունները.

Նախատեսվող գործունեություն՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող ուսումնասիրություն, արտադրություն, կառուցում, շահագործում, վերակառուցում, ընդլայնում, տեխնիկական և տեխնոլոգիական վերազինում, վերապրոֆիլավորում, կոնսերվացում, տեղափոխում, լուծարում, փակում.

Ձեռնարկող՝ սույն օրենքի համաձայն՝ փորձաքննության ենթակա հիմնադրութային փաստաթուղթ մշակող, ընդունող, իրականացնող և (կամ) գործունեություն իրականացնող կամ պատվիրող պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմին, իրավաբանական կամ ֆիզիկական անձ.

Ազդակիր համայնք՝ շրջակա միջավայրի վրա հիմնադրութային փաստաթղթի կամ նախատեսվող գործունեության հնարավոր ազդեցության ենթակա համայնքի (համայնքների) բնակչություն՝ ֆիզիկական և (կամ) իրավաբանական անձինք.

Շահագրգիռ հանրություն՝ փորձաքննության ենթակա հիմնադրութային փաստաթղթի ընդունման և (կամ) նախատեսվող գործունեության իրականացման

առնչությամբ հետաքրքրություն ցուցաբերող իրավաբանական և ֆիզիկական անձինք.

Գործընթացի մասնակիցներ՝ պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմիններ, ֆիզիկական ու իրավաբանական անձինք, ներառյալ՝ ազդակիր համայնք, շահագրգիռ հանրություն, որոնք, սույն օրենքի համաձայն, մասնակցում են գնահատումների և (կամ) փորձաքննության գործընթացին.

Հայտ՝ ձեռնարկողի կամ նրա պատվերով կազմած հիմնադրութային փաստաթղթի մշակման և (կամ) նախատեսվող գործունեության նախաձեռնության մասին ծանուցման փաթեթ.

Բնության հատուկ պահպանվող տարածք՝ ցամաքի (ներառյալ՝ մակերևութային ու ստորերկրյա ջրերը և ընդերքը) և համապատասխան օդային ավազանի՝ սույն օրենքով գիտական, կրթական, առողջարարական, պատմամշակութային, ռեկրեացիոն, զբոսաշրջության, գեղագիտական արժեք են ներկայացնում, և որոնց համար սահմանված է պահպանության հատուկ ռեժիմ.

Ազգային պարկ՝ բնապահպանական, գիտական, պատմամշակութային, գեղագիտական, ռեկրեացիոն արժեքներ ներկայացնող միջազգային և (կամ) հանրապետական նշանակություն ունեցող տարածք, որը բնական լանդշաֆտների ու մշակութային արժեքների զուգորդման շնորհիվ կարող է օգտագործվել գիտական, կրթական, ռեկրեացիոն, մշակութային և տնտեսական նպատակներով, և որի համար սահմանված է պահպանության հատուկ ռեժիմ.

Ազգային պարկի արգելոցային գոտի՝ ազգային պարկի տարածքից առանձնացված տեղամաս, որտեղ գործում է պետական արգելոցի համար սույն օրենքով սահմանված ռեժիմը.

Ազգային պարկի արգելավայրային գոտի՝ ազգային պարկի տարածքից առանձնացված տեղամաս, որտեղ գործում է պետական արգելավայրի համար սույն օրենքով սահմանված ռեժիմը.

Ազգային պարկի ռեկրեացիոն գոտի՝ ազգային պարկի տարածքից առանձնացված տեղամաս, որտեղ թույլատրվում է քաղաքացիների հանգստի և

զբոսաշրջության ու դրա հետ կապված սպասարկման ծառայության կազմակերպում

Ազգային պարկի տնտեսական գոտի՝ ազգային պարկի տարածքից առանձնացված տեղամաս, որտեղ թույլատրվում է ազգային պարկի ռեժիմին համապատասխանող տնտեսական գործունեություն.

Պետական արգելավայր՝ գիտական, կրթական, պատմամշակութային, տնտեսական արժեք ներկայացնող տարածք, որտեղ ապահովվում են էկոհամակարգերի և դրանց բաղադրիչների պահպանությունը և բնական վերարտադրությունը.

Պետական արգելոց՝ գիտական, կրթական, պատմամշակութային արժեք ներկայացնող առանձնահատուկ բնապահպանական, գեղագիտական հատկանիշներով օժտված միջազգային և (կամ) հանրապետական նշանակություն ունեցող տարածք, որտեղ բնական միջավայրի զարգացման գործընթացներն ընթանում են առանց մարդու անմիջական միջամտության.

Բնության հատուկ պահպանվող տարածքի պահպանման գոտի՝ տարածք, որի ստեղծման նպատակն է սահմանափակել (մեղմացնել) բացասական մարդածին ներգործությունը բնության հատուկ պահպանվող տարածքների էկոհամակարգերի, կենդանական ու բուսական աշխարհի ներկայացուցիչների, գիտական կամ պատմամշակութային արժեք ունեցող օբյեկտների վրա.

Լանդշաֆտ՝ աշխարհագրական թաղանթի համասեռ տեղամաս, որը հարևան տարածքներից տարբերվում է երկրաբանական կառուցվածքի, ռելիեֆի, կլիմայի, հողաբուսական ծածկույթի և կենդանական աշխարհի ամբողջությամբ.

Հող՝ երկրի մակերևույթում բիոտիկ, աբիոտիկ և մարդածին գործոնների երկարատև ազդեցության արդյունքում առաջացած ինքնուրույն բնագիտապատմական հանքաօրգանական բնական մարմին՝ կազմված կոշտ հանքային և օրգանական մասնիկներից, ջրից ու օդից և ունի բույսերի աճի ու զարգացման համար համապատասխան պայմաններ ստեղծող յուրահատուկ գենետիկամորֆոլոգիական հատկանիշներ ու հատկություններ.

Հողային պրոֆիլ՝ հողագոյացման գործընթացում օրինաչափորեն փոփոխվող և գենետիկորեն կապակցված հողային հորիզոնների ամբողջություն.

Խախտված հողեր՝ առաջնային տնտեսական արժեքը կորցրած և շրջակա միջավայրի վրա բացասական ներգործության աղբյուր հանդիսացող հողեր

Հողի բերրի շերտ՝ հողային ծածկույթի վերին շերտի բուսահող, որն օգտագործվում է հողերի բարելավման, կանաչապատման, ռեկուլտիվացման նպատակներով.

Հողի պոտենցիալ բերրի շերտ՝ հողային պրոֆիլի ստորին մասը, որն իր հատկություններով համընկնում է պոտենցիալ բերրի ապարների (բուսականության աճի համար սահմանափակ բարենպաստ քիմիական կամ ֆիզիկական հատկություններ ունեցող լեռնային ապարներ) հատկություններին.

Հողածածկույթ՝ երկրի կամ դրա ցանկացած տարածքի մակերևույթը ծածկող հողերի ամբողջությունն է.

Հողի բերրի շերտի հանման նորմեր՝ հողի հանվող բերրի շերտի խորությունը (սմ), ծավալը ($մ^3$), զանգվածը (տ).

Ռեկուլտիվացում՝ խախտված հողերի վերականգնմանն ուղղված (օգտագործման համար պիտանի վիճակի բերելու) միջոցառումների համալիր, որը կատարվում է 2 փուլով՝ տեխնիկական և կենսաբանական.

Կենսաբանական բազմազանություն՝ ցամաքային, օդային և ջրային էկոհամակարգերի բաղադրիչներ համարվող կենդանի օրգանիզմների տարատեսակություն, որը ներառում է բազմազանությունը տեսակի շրջանակներում, տեսակների միջև և էկոհամակարգերի բազմազանությունը.

Բնապահպանական կառավարման պլան՝ գործունեության հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող միջոցառումներ և դրանց իրականացման մշտադիտարկման ցուցիչներ, որոնք հստակ են և չափելի՝ որոշակի ժամանակի ընթացքում.

Բնության հուշարձան, բնության հատուկ պահպանվող տարածքի կարգավիճակ ունեցող գիտական, պատմամշակութային և գեղագիտական

հատուկ արժեք ներկայացնող երկրաբանական, ջրաերկրաբանական, ջրագրական, բնապատմական, կենսաբանական բնական օբյեկտ.

Պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ՝ պետական հաշվառման վերցված պատմական, գիտական, գեղարվեստական կամ մշակութային այլ արժեք ունեցող կառույցները, դրանց համակառույցներն ու համալիրները՝ իրենց գրված կամ պատմականորեն իրենց հետ կապված տարածքով, դրանց մասը կազմող հնագիտական, գեղարվեստական, վիմագրական, ազգագրական բնույթի տարրերն ու բեկորները, պատմամշակութային և բնապատմական արգելոցները, հիշարժան վայրերը՝ անկախ պահպանվածության աստիճանից:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 2014թ. հունիսի 21-ի ՀՕ 110-Ն (փոփոխությունները 2023թ. մայիսի 3) 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-ի «ա» ենթակետի համաձայն, նախատեսվող գործունեության նախագծային փաստաթղթերը ենթակա են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման սույն հաշվետվությունը կազմվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության որոշումների պահանջներին համապատասխան:

Շրջակա միջավայրի վրա մարդկային գործունեության վնասակար ազդեցության կանխման, կենսոլորտի կայունության պահպանման, բնության և մարդու կենսագործունեության ներդաշնակության պահպանման համար կարևորագույն նշանակություն ունի յուրաքանչյուր նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության ճշգրիտ և լիարժեք գնահատումը:

Գործունեության բնապահպանական գնահատումը պետք է ներառի ուղղակի և անուղղակի ազդեցության կանխորոշումը, նկարագրությունը և հիմք հանդիսանա դրանց կանխարգելման կամ հնարավոր նվազեցման պարտադիր միջոցառումների մշակման համար:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը սահմանում է, որ «Պետությունը խթանում է շրջակա միջավայրի պահպանությունը, բարելավումը և վերականգնումը, բնական պաշարների ողջամիտ օգտագործումը և այլն»:

Սկսած 1991թ. շրջակա միջավայրի պահպանությանն առնչվող ավելի քան 25 օրենսգրքեր և օրենքներ, բազմաթիվ ենթաօրենսդրական ակտեր և կանոնակարգեր են ընդունվել:

Ծրագրով իրականացվելիք աշխատանքների արդյունքում նախատեսվող շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը մշակված

է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենքի հիման վրա:

Հաշվետվությունը ներառում է տվյալներ, հիմնավորումներ և հաշվարկներ, որոնք անհրաժեշտ են շրջակա միջավայրի վրա նախատեսվող գործունեության ազդեցության փորձաքննության իրականացման համար:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (այսուհետ՝ ՇՄԱԳ) նպատակն է բացահայտել նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում կանխատեսվող էկոլոգիական ազդեցությունը (շրջակա միջավայրը աղտոտող վնասակար նյութերը, թափոնները և այլ գործոններ), վերլուծել և գնահատել այն և ցույց տալ, որ նախատեսված են դրա կանխարգելմանը, չեզոքացմանը և կամ նվազեցմանը ուղղված անհրաժեշտ միջոցառումներ:

Սույն հաշվետվությունը կազմվել է Լոռու մարզի Ալավերդի համայնքի Սանահին բնակավայրում նոր կրթահամալիրի կառուման համար, որի նախագծային տեղակապման աշխատանքներն իրականացվել են «ԿԱՊԻՏԱԼ ԴԻԶԱՅՆ» ՍՊԸ-ի կողմից:

Նախագծի մշակման համար հիմք են հանդիսացել.

- Ինժեներաերկրաբանական հետազոտությունների արդյունքները,
- ՀՀ ում գործող օրենքներն ու նորմատիվատեխնիկական փաստաթղթերը,
- Պատվիրատուի առաջադրանքը՝ պայմանավորված համապատասխան հատակագծային ու ծավալատարածական լուծումներով:

Ծրագրի նպատակն է դպրոցների ուժեղացումը կամ նորի կառուցումը: Դպրոցներն ամրացնելու կամ նորը կառուցելու պարագայում, որպես ծրագրի վերջնական արդյունք կապահովվի սեյսմակայուն դպրոցների շենքերի բարելավված տեսակարար կշիռը:

Ծրագիրը համահունչ է ՀՀ կառավարության «Աղետների ռիսկերի նվազեցման ազգային ռազմավարության» նպատակներին և ուղղված է երկրի սեյսմակայունության ապահովմանը, անհատական և հասարակական անվտանգության մակարդակի բարձրացմանը և երկրի կայուն զարգացմանը:

ՈԼՈՐՏԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԸ

Հայաստանի Հանրապետության բնապահպանական օրենսդրական և կարգավորիչ շրջանակն ընդգրկում է ավելի քան 30 բնապահպանական օրենքներ: Քաղաքաշինության ոլորտի համար առավել կիրառելի ազգային բնապահպանական քաղաքականությունները և օրենսդրական կարգավորիչ հիմքերն ներկայացված են ստորև.

- ՀՀ Սահմանադրություն (2015) 10-րդ հոդվածը սահմանում է, որ ՀՀ ընդերքը և ջրային ռեսուրսներ հանդիսանում են պետության բացառիկ սեփականությունը, իսկ հոդված 12-ը՝ պետության խթանիչ դերը շրջակա միջավայրի պահպանության, բարելավման, վերականգնման և բնական պաշարների ողջամիտ օգտագործման գործընթացում՝ հաշվի առնելով կայուն զարգացման սկզբունքները և պատասխանատվությունն ապագա սերունդների առջև, ինչպես նաև յուրաքանչյուր ոքի պարտավորությունը շրջակա միջավայրի պահպանման գործընթացում:
- ՀՀ Օրենքը Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին, 2014թ. հունիսի 21-ի ՀՕ 110-Ն (փոփոխությունները 2023թ. մայիսի 3) - պահանջում է իրականացնել ծրագրերի դասակարգում ըստ կատեգորիաների՝ կախված գործունեության տեսակից և չափերից, իրականացնել ազդեցությունների գնահատում, և պետական փորձաքննության իրականացման արդյունքում ստանալ փորձագիտական եզրակացություն:
- «ՀՀ հողային օրենսգիրք» (2001) - սահմանում է պետական, այդ թվում՝ տարբեր նպատակային նշանակության (գյուղատնտեսական, շինարարական, արդյունաբերական և այլ նպատակներով) հողերի օգտագործման դրույթները:
- «ՀՀ Ջրային օրենսգիրք» (2002),
- «Ջրի ազգային քաղաքականության հիմնադրույթների մասին» ՀՀ օրենք,
- «ՀՀ Ջրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենք (2006),
- «Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին» ՀՀ օրենք (2008),

- ՀՀ Օրենքը Թափոնների մասին (2004) կարգավորում է թափոնների, այդ թվում շինարարական աղբի, հավաքագրումը, տեղափոխումը, պահեստավորումը, վերամշակումը և տեղադրումը ՀՀ-ում:
- ՀՀ Օրենքը Մթնոլորտային Օդի Պահպանության մասին (ընդունված 1994թ. և լրամշակված 2022թ.) - կարգավորում է մթնոլորտային օդի պահպանության իրավական և կազմակերպական հիմքերը՝ ուղղված մթնոլորտային օդի որակի պահպանությանը, մարդու առողջության և շրջակա միջավայրի համար բարենպաստ մթնոլորտային օդի որակի ապահովման նպատակով՝ մթնոլորտային օդի պահպանության բնագավառում հասարակական հարաբերությունները:
- ՀՀ Օրենքը Բնապահպանական Վերահսկողության մասին (2005) կարգավորում է ՀՀ-ում պետական վերահսկողության կազմակերպումը տնտեսվարող սուբյեկտների կողմից բնապահպանական օրենսդրության և ՇՄԱԳ փորձագիտական եզրակացության պահանջների կատարման վերաբերյալ;
- ՀՀ Օրենքը Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին (2000) կարգավորում է տնտեսական գործունեության վերահսկողության ստուգայցերի իրականացման արարողակարգերը:
- ՀՀ Օրենքը Քաղաքաշինության մասին (1998) (Հոդվածներ 13, 14,15,16, Գլուխ 6) կարգավորում է շինարարական գործընթացի կազմակերպումը, պահանջում է նախատեսվող գործունեության մասին տեղակատվության հրապարակումը և նախագծման փուլում հանրության մասնակցությունը: Քաղաքաշինության ոլորտում բնապահպանական նորմերի և նորմատիվային փաստաթղթերի կիրառկումն ապահովվում է Քաղաքաշինարարության նախարարի ՀՀ ՇՆ 10-01-2014 Շինարարությունում, նորմատիվ փաստաթղթերի համակարգ. Հիմնական դրույթներ Շինարարական նորմերը հաստատելու մասին N65-Ն հրամանով (8 ապրիլի 2014):
- ՀՀ Օրենքը Պատմության և մշակութային անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին (1998թ.) սահմանում է իրավական և քաղաքական հիմքեր ՀՀ-ում մշակութային և

պատմական հուշարձանների օգտագործման համար և կարգավորում է հարաբերությունները պահպանության և օգտագործման միջև: Այն նկարագրում է նոր հուշարձանի հայտնաբերման դեպքում կիրառվող ընթացակարգերը, սահմանում է հուշարձանների պետական գրանցման կանոնները, դրանց շուրջ պահպանման գոտու գնահատումը, և պատմամշակութային արգելավայրերի ստեղծումը:

- ՀՀ Օրենքը Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին (2006թ.) սահմանում է Հանրապետության համալիր կամ առանձին բնական օբյեկտների, ինչպես նաև բնության հատուկ պահպանվող տարածքների էկոհամակարգերի զարգացման, վերականգնման, պահպանման, վերարտադրության և օգտագործման իրավական հիմքերը և պետական քաղաքականության հարաբերությունները: Համաձայն օրենքի բնության հատուկ պահպանվող տարածքները ըստ նշանակության դասակարգվում են միջազգային, հանրապետական և տեղական կարևորության տարածքների, ըստ կատեգորիայի՝ պետական արգելոցի, ազգային պարկի, պետական արգելավայրի և բնության հուշարձանի:
- ՀՀ Օրենքը Բուսական աշխարհի մասին (1999թ.) սահմանում է ՀՀ պետական քաղաքականությունը բուսական աշխարհի պահպանման, պաշտպանության օգտագործման և վերարտադրության ոլորտներում: Օրենքը սահմանում է բուսական աշխարհի պետական գույքագրման և պետական մշտադիտարկման իրականացման նպատակները, բուսական աշխարհի Կարմիր գրքի կազմման պահանջները և մոտեցումները, բուսական աշխարհի օգտագործման պայմանները, օգտագործման իրավունքից զրկելու պայմանները, բուսական աշխարհի պահպանման դրույթները և տնտեսական գործիքները բուսական աշխարհի ռեսուրսների կայուն օգտագործման և մշտադիտարկման համար:
- ՀՀ Օրենքը Կենդանական աշխարհի մասին (2000թ.) սահմանում է ՀՀ պետական քաղաքականությունը կենդանական աշխարհի պահպանման, օգտագործման և վերարտադրության ոլորտներում: Օրենքը սահմանում է կենդանական աշխարհի ուսումնասիրությունների, պետական

մշտադիտարկման, պետական գույքագրման նպատակները, կենդանական աշխարհի Կարմիր գրքի կազմման սկզբունքները, կենդանատեսակների օգտագործման պայմանները, օգտագործման իրավունքից զրկելու հիմքերը, կենդանիների պահպանման դրույթները, և կենդանական աշխարհի ռեսուրսների կայուն օգտագործման և մշտադիտարկման տնտեսական գործիքները։

- ՀՀ Օրենք Սեյսմիկ պաշտպանության մասին (12 հունիս, 2002 թ.) սահմանում է ՀՀ սեյսմիկ պաշտպանության բնագավառի կազմակերպման հիմնադրույթները և կարգավորում է դրա հետ կապված հարաբերությունները։
- ՀՀ Քաղաքաշինության մասին օրենք (05 մայիս, 1998 թ.) սահմանում է Հայաստանի Հանրապետությունում քաղաքաշինական գործունեության հիմնադրույթները և կարգավորում այդ գործունեության հետ կապված հարաբերությունները:
- ՀՀՇՆ 31-01-2014 «Բնակելի շենքեր. մաս I. Բազմաբնակարան բնակելի շենքեր» շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի N 82 հրամանում փոփոխություն կատարելու մասին:
- ՀՀ Քաղաքաշինության նախարարի հրաման N 11- Ն «Շինարարական արտադրության կազմակերպման աշխատանքների կատարում Շինարարական նորմերը հաստատելու մասին» (14 հունվար 2008) (Գլուխ IX):
- ՀՀ Քաղաքաշինության նախարարի հրաման N 44 Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգ (28 ապրիլի 1998) պահանջում է շինարարությանը վերաբերվող բոլոր նորմերի և ստանդարտների կիրառումը տնտեսվարող սուբյեկտի կողմից:
- ՀՀ Կառավարության որոշում N 121-Ն «Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների գործածության գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին» (2003) սահմանում է ՀՀ-ում վտանգավոր թափոնների գործածության գործունեության լիցենզավորման պայմանները և կարգավորվում է դրա հետ կապված հարաբերությունները:

- ՀՀ Կառավարության որոշում N 108-Ն (2018 թ.) «Բնակավայրերի կանաչ գոտիների չափերին և տեսակային կազմին ներկայացվող պահանջները սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-ի N1318-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» սահմանվում է քաղաքային և գյուղական բնակավայրերի կանաչ գոտիների չափերը՝ ըստ բնակավայրի տարածքի, կանաչ գոտիների տեսակները և կանաչապատման տարրերի տեսակային կազմը (տեսականին)՝ ըստ գոտիականության, ինչպես նաև կանաչ գոտիների անտառների պահպանությանն ու արդյունավետ օգտագործմանը ներկայացվող պահանջները:
- ՀՀ Կառավարության որոշում N 1059-Ա (սեպտեմբերի 25, 2014 թ.) «Բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և ռազմավարության բնագավառում պետական ծրագիրը և միջոցառումները հաստատելու մասին» հաստատում է ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը՝ համաձայն հավելվածի 1-ի և Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանության և օգտագործման բնագավառի 2014- 2020 թվականների պետական ծրագրի միջոցառումները՝ համաձայն N 2 հավելվածի:
- ՀՀ կառավարության N 1404-Ն որոշում 02.11.2017թ. «Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու և ՀՀ կառավարության 20.07.2006.N 1026-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»:
- ՀՀ կառավարության N 781-Ն որոշում (31.07.2014թ.) «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին»:
- ՀՀ կառավարության N 1504-Ն որոշում 25.12.2014թ. «Պետական միջոցների հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում

էներգախնայողության և էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների կիրառման մասին»:

- ՀՀ կառավարության N 426-Ն որոշում 12.04.2018թ. «Նոր կառուցվող բնակելի բազմաբնակարան շենքերում, ինչպես նաև պետական միջոցների հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում էներգախնայողության և էներգաարդյունավետության տեխնիկական կանոնակարգը սահմանելու մասին»:
- ՀՀ կառավարության որոշում N 967-Ն ՀՀ (14 օգոստոս, 2008 թ. «Բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին») հաստատում է ՀՀ-ում բնության հուշարձանների ցանկը՝ ըստ հավելվածի:
- ՀՀ կառավարության որոշում N 71-Ն «Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին» (հունվարի 29, 2010 թ.) հաստատում է Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գիրքը՝ համաձայն հավելվածի:
- ՀՀ կառավարության որոշում N 72-Ն «Հայաստանի Հանրապետության բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին որոշումը» (հունվարի 29, 2010թ.) հաստատում է Հայաստանի Հանրապետության բույսերի Կարմիր գիրքը՝ համաձայն հավելվածի:
- ՀՀ կառավարության որոշում N 596-Ն (19 մարտ, 2015թ.) ՀՀ-ում «Կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» սահմանում է կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը՝ համաձայն N1 հավելվածի:
- ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի հրաման N-1243-Ն (30 նոյեմբերի, 2015 թ.) «Սեյսմիկ պաշտպանության բնագավառի հատուկ և կարևոր նշանակության օբյեկտները սահմանելու մասին», որը սահմանում է սեյսմիկ պաշտպանության բնագավառի հատուկ և կարևոր նշանակության օբյեկտները՝ համաձայն հավելվածի:

- ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի հրաման N 102-Ն (28 դեկտեմբեր, 2020թ.) ՀՀՇՆ 20.04-2020 «Երկրաշարժադիմացկուն շինարարության նախագծման նորմեր» շինարարական նորմերը հաստատելու և ՀՀ քաղաքաշինության նախարարի 2006 թվականի փետրվարի 3-ի N 24-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին»:
- ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի հրաման N 49-Ն (24.03.2016): «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավման 2015-2030 թվականների ծրագրի շրջանակներում իրականացվող դպրոցական շենքերի ուժեղացման և նորի կառուցման համար Հայաստանի Հանրապետությունում գործող շինարարական նորմերով թույլատրելի առավել բարձր պահանջներ և պայմաններ կիրառելու մասին»:
- ՀՀ առողջապահության նախարարի հրաման N 12-Ն (28.03.2017) «Հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններին ներկայացվող պահանջներ» N 2.2.4-016-17 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2002 թվականի փետրվարի 11-ի N 82 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին»:
- ՀՀ առողջապահության նախարարի հրաման N15-Ն (19.09.2012) «Կազմակերպություններում աշխատողների սանիտարակենցաղային սենքերի» N 2.2.8-003-12 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին»:
- ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի հրաման N 103-Ա ՀՀՇՆ31-03.01-2014 «Հանրակրթական նշանակության շենքեր» շինարարական նորմերը հաստատելու մասին»:
- ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի հրաման N 43-Ա (05.04.2018) «Բնակչության սակավաշարժ խմբերի և հաշմանդամություն ունեցող անձանց համար շենքերի և շինությունների մատչելիության ապահովման նախագծման կանոնների հավաքածուին հավանություն տալու մասին» (https://www.minurban.am/storage/Normative/43-A.pdf):

- ՀՀ կառավարության որոշում N 438-Ն (20 ապրիլի, 2002թ.) «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգ հաստատելու մասին» հաստատում է պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը։

Ուղեցույցներ և ստանդարտներ

Հայաստանի Հանրապետության տարածքում գործող քաղաքաշինության բնագավառի նորմատիվատեխնիկական փաստաթղթերի ցուցակ (2013), որը պարունակում է ՀՀ-ում գործող շինարարական նորմերի համակարգը, այդ թվում՝ տարբեր տիպի աշխատանքների անվտանգության վերաբերյալ:

Բնապահպանական որակի ստանդարտներ, որոնք կիրառվում են ջրային ռեսուրսների, օդի, ինչպես նաև աղմուկի և թրթռումների ազդեցությունը որոշելու համար, մշակված են և կիրառելի են նաև քաղաքաշինարարական ոլորտի համար:

ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Կրթահամալիրի կառուցման ենթակա տարածքը գտնվում է Լոռու մարզի Ալավերդի համայնքի Սանահին բնակավայրի վարչական տարածքում, ըստ կադաստրային վկայականի իրավունքի տեսակը՝ սեփականություն, հողի նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, իսկ գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ հասարակական կառուցապատման: Հողամասի նպատակային նշանակությունը համապատասխանում է նախագծի իրականացման նպատակներին:

Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է Լոռու մարզի Ալավերդի համայնքի Սանահին բնակավայրի վարչական սահմաններում՝ Միկոյան եղբայրների թանգարանի հարևանությամբ: Հողամասը հիմնականում բաց և կանաչապատ տարածք է՝ մասնակիորեն հարթ մակերեսով:

Տարածքի հյուսիսային հատվածում տեղակայված է թանգարանի շենքը, հարավային մասում՝ կարմիր տանիքով օժանդակ կառույց՝ դիտարկվող տարածքից 5 մ հեռավորությամբ: Արևմտյան եզրով անցնում է տեղական նշանակության ավտոճանապարհ, որով ապահովվում է մուտքը տարածք: Հողամասի անմիջական հարևանությամբ կան նաև կանաչապատ և գյուղատնտեսական նշանակության հողատարածքներ (քարտեզի մեջ ընդգծված են դեղինով):

Տարածքի աշխարհագրական կոորդինատներն են՝ մոտավորապես 40°45′58.0″ հյուսիսային լայնություն և 44°32′14.0″ արևելյան երկայնություն: Տարածքը տեղադրված է մոտավորապես 3,5 կմ հեռավորության վրա Ալավերդի քաղաքի կենտրոնից: Մոտակա շենքերը տարածքից գտնվում են ավելի քան 5-50 մ և ավելի հեռավորության վրա: Սանահին վանական համալիրից գտնվում է 300 և ավելի մետր հեռավորության վրա՝ ուղիղ գծով:

Ուսումնասիրվող տարածքն ունի ենթակառուցվածքային կապեր՝ առկա են ճանապարհային մուտք, էլեկտրական գծեր և ենթակառուցվածքներ, որոնք անցնում են հարակից հողամասերով։

ՆԿ 1. Իրաղրային քարտեզ (Google earth-արբանյակային/ snapshot)

Նախատեսվող գործունեության նախագծային լուծումները հիմնվել են ՀՀ քաղաքաշինական և նորմատիվ փաստաթղթերի, ՀՀ գործող շինարարական նորմերի վրա, մասնավորապես.

- ✓ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում»,
- ✓ ՀՀՇՆ 31-03-2018 «Հասարակական շենքեր և շինություններ» շինարարական նորմերը հաստատելու և ՀՀ քաղաքաշինության նախարարի 2001 թ. հոկտեմբերի 1-ի N82 հրամանում փոփոխություն կատարելու մասին։
- ✓ ՀՀՇՆ 21-01-2014 «Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգություն»,
- ✓ ՀՀՇՆ 20.04 «Երկրաշարժադիմացկուն շինարարություն»,
- ✓ ՀՀՇՆII-0.00-2006 «Հակահրդեհային անվտանգություն. նախագծման նորմեր»,
- ✓ ՀՀՇՆ VI 13.102-99 «Բետոնյա և երկաթբետոնյան կոնստրուկցիաներ»,
- ✓ СНиП 2.01.07-85 «Բեռնվածքներ և ազդեցություններ»,

- ✓ СНиП 2.03.11-85 «Շինարարական կոնստուկցիաների պաշտպանություն կորոզիայից»,
- ✓ СНиП 12-01-2004 «Շինարարության կազմակերպում»:
- ✓ Այլ նորմեր և կարգավորումներ:



Ընդհանուր առմամբ, քարտեզը ցույց է տալիս Ալավերդու քաղաքային միջավայրի հյուսիսային (գետափնյա) և հարավային (բարձրադիր) հատվածների միջև եղած տարածքային կապը՝ մոտավորապես մեկ կիլոմետր հեռավորությամբ: Դեբետ գետը գտնվում է ուղիղ գծով մոտ 800 մ և ավելի հեռավորության վրա դիտարկվող տարածքից:

Համաձայն նախագծային լուծումների նոր կրթահամալիրը նախատեսված է լինելու մինչև 200 աշակերտի և մինչև 40 մանկապարտեզի սաների համար: Շենքը բաղկացած է երկհարկանի դպրոցից և մանկապարտեզից:



ՆԿ 1: Գլխավոր հատակագիծ

ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ

Տիպային նախագծին համապատասխան նախատեսվել է կրթահամալիրի արտաքին տարածքի բարեկարգման և կրթահամալիրի տեղակապման աշխատանքներ:

Տարածքը բարեկարգվելու է: Իրականացվելու են ասֆալտապատ ճանապարհներ ավտոմեքենաների համար, բազալտե ջարդոնից մայթեր:

Կառույցի շուրջն իրականացվում է սալվածք՝ մասնակի ասֆալտբետոնե ծածկույթից, մասնակի՝ բազալտե ջարդոնից: Մանկապարտեզի երեխաների համար դրսում կազմակերպվում է մանկական խաղահրապարակ իր շվաքարաններով: Խաղահրապարկի երկայնքով նախատեսված է մայթ բետոնե ձևավոր սալերից ծածկութով: Նախատեսվում է տեղադրել նոր նստարաններ և աղբամաններ: Նախատեսվում է տեղադրել չորս զրուցատաղավար 6.8x5.5մ չափերով: Խաղահրապարակը նախատեսվում է կահավորել մանկական խաղերով: Խաղահրապարակների ընդհանուր մակերեսը՝ 520.0քմ:

Դպրոցի սաների համար նախատեսվում է կառուցել բաց սպորտհրապարակ 540.0քմ՝ իր տրիբունայով:

Տարածքում նախատեսվում է տեղակայել ուսումնական ջերմոց 32.0քմ:

Կրթահամալիրը հողամասի պարագծով ցանկապատվում է մետաղական 1.5մ բարձրությամբ ցանկապատերով: Կրթահամալիրը ունի երկու մուտք, որոնցում տեղադրվում են մետաղական դարպաս և մետաղական դռնակ:

Կանաչապատ տարածքում տեղակայված է թաքստոցի գետնանցման ելքը:

Գլխավոր հատակագծում նշված վայրում նախատեսվում է կազմակերպել արևային ֆոտովոլտային կայանների տեղադրում, որոնց մի մասը տեղադրվելու է կրթահամալիրի տանիքին: Ֆոտովոլտային վահանակների ընդհանուր քանակը 314 հատ, զբաղեցրած մակերեսը՝ մոտ 1140.0քմ: Գետնին տեղակայված ֆոտովոլտային վահանակների վնասվածքներից պաշտպանության նկատառումներից ելնելով նախատեսվում է դրանց տարածքը սահմանազատել մետաղական ցանկապատով, տեղադրել մուտքի դարպաս: Սահմանազատված տարածքում է տեղակայվելու նաև 400կՎԱ հզորությամբ էլ. ենթակայանը:

Կանաչապատ տարածքներում նախատեսվում է իրականացնել բուսահողի լիցք, սերմի ցանք: Տարածքը նախատեսվում է կանաչապատել արժեքավոր և տեղանքի բնակլիմայական առանձնահատկություններին համապատասխանող բուսատեսակներիով, ինչպես նաև իրականացնել սամշիտ, սիզամարգեր և ստեղծել ծաղկանոց: Նախատեսվում է իրականացնել

նոր ծառատեսակների և թփերի տնկման աշխատանքներ: Տնկվող ծառերի քանակ՝ 144 հատ / ուռենի-2, հացենի-27, եղևնի-11, գիհի-41, ակացիա-32, թեղի-31/:

Նախատեսվում է իրականացնել տարածքի արտաքին լուսավորության ցանցի մոնտաժման աշխատանքներ:

Նախատեսվում է իրականացնել նոր ոռոգման ցանցի և ոռոգման պոմպակայանի կառուցման աշխատանքներ:

Տեխնիկատնտեսական ցուցանիշեր

	Ցուցանիշ	**Մակերես (ք.մ.)**	**Տոկոսային արժեք**
1	**Հողամասի մակերես**	**16100**	**100%**
2	**Կառուցապատման մակերես**	**3150**	**19%**
3	**Բարեկարգման անջրանցիկ մակերես**	**5030**	**31%**
4	**Կանաչապատման մակերես**	**7920**	**50%**

Կրթահամալիրի արտաքին ջրամատակարարման և ջրահեռացման աշխատանքային նախագիծը կազմված է ճարտարապետական գլխավոր հատակագծի և համայնքի կաղմից տրված տեխնիկական առաջադրանքի հիման վրա:

Նախագծով նախատեսվում է՝

1. Կառուցել de63մմ, P=1.0 ՄՊա, L=164.0մ երկարությամբ ջրագիծ պոլիէթիլենե խողովակներով: Ջրագիծը միանում է d=75մմ տրամագծով պողպատե ջրագծից: Ջրագծի միացման կետում կառուցվում է ե/բ փանանային հեր D=1.0մ H=2.10մ և նրան կից ջրագծի վրա ե/բ հակահրդեհային հիդրանտի հոր D=1.5մ H=2.10մ հիդրանտով H=1.25մ: Կրթահամալիրի դիմաց սահմանազատման կետում նախագծվող ջրագծի վրա կառուցել ջրաչափական հանգույց DN50մմ որը տեղադրվում է D=1.5մ H=1.50մ ե/բ հորի մեջ:

   Ջրագծի կառուցումից հետո կատարվում է փորձարկում, որից հետո ետլիցք ավազով:
2. Կառուցել de160մմ, L=218.0մ երկարությամբ կենցաղային կոյուղագիծ, պոլիէթիլենե ակոսավոր խողովակներով: Կրթահամալիրից դուրս եկող կենցաղային կայուղաջրերը հավաքվում և տեղափոխվում են դեպի մաքրման կայան: Տեղադրվելու է Topac-15 տեսակի

մարքման կայան՝ 3.0խմ օրական ծավալով: Մաքրման կայանից մշակված ջուրը կուտակվելու է ե/բ ռեզերվուարում հետագայում ոռոգման նպատակներով օգտագործելու համար: Կոյուղագծի վրա նախատեսվում է կառուցել թվով 13 հատ ե/բ դիտահորեր:

Կոյուղագծի կառուցումից հետո կատարվում է փորձարկում, որից հետո ետլիցք ավազով:

Տեղանքի գրունտների վերաբերյալ տեղեկատվությունը ստացել ենք ինժեներաերկրաբանական ուսումնասիրությունների հաշվետվության հիման վրա:

Շինարարական աշխատանքների կատարման ժամանակ նախագծվող և այլ կոմունիկացիաների միջև պահպանել առնվազն 1.5մ հեռավորություն: Նախագիծը կազմված է ՀՀ-ում գործող շին նորմերի և կանոնների համաձայն:

ՀՈՂԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Կառուցապատման ժամանակ կատարվելու է 11428մ³ ծավալի հողային աշխատանքներ՝ հանույթ, որից ետ լիցք՝ 5617.0մ³: Ավելացած 4692.5մ³ ծավալով հողային զանգվածն օգտագործվելու է տարածքի հարթեցման համար, քանի որ տարածքում առկա են ռելիեֆի անհարթություններ: Համաձայն կատարված ինժեներաերկրաբանական ուսումնասիրությունների՝ տարածքում հողաբուսական շերտի հաստությունը կազմում է մոտավորապես 0,2մ: Հողային աշխատանքների ընթացքում հանվելու և տարածքում պահվելու է 1118,5 մ³ ծավալով հողաբուսաշերտ, որը հետագայում կօգտագործվի տարածքի բարեկարգման և կանաչապատման համար: Ահա հստակ, ՇՄԱԳ-ում ներառման համար պատրաստված մեկ պարբերություն: Շինարարական աշխատանքների ընթացքում հողաբուսական շերտի ամբողջականությունը պահպանելու նպատակով այն նախապես առանձնացվելու և հավաքվելու է սահմանված կարգով՝ ապահովելով մաքուր, խառնուրդներից ազատ վիճակը: Հավաքված վերին բերրի հողաշերտը կառանձնացվի ու կպահեստավորվի էրոզիայից և ջրով լվացվելուց պաշտպանված վայրերում՝ անջրաթափանց թաղանթով ծածկի տակ: Շինարարության ավարտին հողաբուսական շերտը կօգտագործվի տարածքի ռեկուլտիվացիայի համար՝ տարածքի բնական բուսածածկի վերականգնման նպատակով:

Հողային զանգվածն առաջանալու է մասնաշենքերի հիմքերի փորման, ներտարածքային ճանապարհների կառուցման, ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի կառուցման համար նախատեսվող աշխատանքներից: Հողային աշխատանքները կատարվելու

են մեքենա-մեխանիզմներով և ձեռքի կտրող, հատող ժամանակակից գործիքներով: Յուրաքնչյուր 50սմ հաստությամբ շերտով ետլիցքից հետո կատարվելու է գրունտի չոր և թաց տոփանում: Հողային և հիմնային, տանիքի, հատակների հարդարման, ինչպես նաև լրող և պատող կոնստրուկցիաների շին. մոնտաժային աշխատանքները կատարվելու են համաձայն աշխատանքային նախագծի՝ ՇՆուԿ 3.02.02.-87-ի և ՇՆուԿIII-4-81-ի պահանջներին համապատասխան:

ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՍ

Արտաքին հաշվարկային ջերմաստիճանը ընդունվել է՝-10^0:

Դպրոցները նախագծվել են Հայաստանի գյուղական վայրերի համար:

Շենքի ծավալա-տարածական լուծումը իրենից ներկայացնում է երեք իրար կցված ծավալներից երկհարկանի հիմնական դպրոցի մասնանաշենքից, մարզադահլիճի և հանդիսություրի դահլիճի մասնաշենքից և երկու հարկանի մանկապարտեզից:

Դպրոցի, մանկապարտեզի և մարզադահլիճի մուտքերի մոտ նախատեսված են թեքահարթակներ:

Հանդիսությունների դահլիճը նախագծով նախատեսված է 144 նստատեղի համար, իսկ մարզասրահի երկրորդ հարկի մակարդակում նախատեսված է 60 տեղանոց տրիբունա, մարզադահլիճի չափերը՝ 24.7մx18.0մ:

Առաջին հարկի ռեկրեացիայի երկու կողմերում նախագծված են դասասենյակներ, կաբինետներ և բուֆետ:

Իսկ երկրորդ հարկի ռեկրեացիայի շուրջը՝ դասասենյակներ, ինֆորմատիկայի կաբինետ, մեթոդ կաբինետ, ռազմագիտության դասասենյակ, ռոբոտատեխնիկայի կաբինետ և ուսուցչանոցը:

Դպրոցի մասնաշենքում նախագծվել է նկուղային հարկ 21.6x20.4մ, որը օգտագործվելու է որպես թաքստոց:

Նկուղային հարկում տեղավորվել են գրադարանը, խոհանոցը, բուժկետը, պահոցները, տղաների և աղջիկների սանհանգույցները , էլեկտրովահանակ, ջրի ռեզերվուար, կաթսայատուն, կոյուղու պոմպարան: Թաքստոց տանող աստիճանը հագեցված է աստիճանային ամբարձիչով հաշմանդամների համար:

Բոլոր հարկերը իրար հետ կապված են աստիճանների միջոցով և ունի հարկերը կապող վերելակ հաշմանդամների համար:

Դպրոցի հիմնական մասնաշենքի երկրորդ հարկի կոնսոլային ծավալը արտահայտում և շեշտում է գլխավոր մուտքը, որը հանդիսանում է կառույցի կոմպոզիցիոն առանցքը:

Գլխավոր մուտքի աստիճանների մոտ նախատեսված է հարթակ դպրոցական բացօթյա միջոցառումների համար :

Մանկապարտեզի մասնաշենքը նախագծված է երկու հարկից չորս խմբի համար և միջանցքով կապված է դպրոցի մասնաշենքի հետ:

Առաջին հարկում տեղադրված են հանդերձարաններ, սանհանգույցներ, խաղասենյակներ, ննջասենյակներ, վարիչի, բժշկի և դայակների սենյակներ:

ԱՐՏԱՔԻՆ ՀԱՐԴԱՐՈՒՄ

Ճակատի խարսխային մասը երեսապատված է բազալտե սալերով:

Նախագծով նախատեսված է Ճակատները երեսապատել ավտոկլավինացված ֆիբրոցեմենտային 8մմ հաստությամբ սալերով, գործարանային ներկածածկույթով:

Մարզասրահի, հանդիսությունների դահլիճների և նախակրթարանի մասնաշենթի մուտքերը շեշտված են ֆիբրոցեմենտային այլ երանգի սալերով:

Տանիքի ծածկույթը մուգ մոխրագույն բիտումային կղմինդրից է:

Արտաքին դռները ալյումինե ջերմակամրջակով են՝ ներկված մուգ մոխրագույն գույնով:

Արտաքին պատուհանագոգերը, հովհարը, քիվերը, դռների և պատուհանների շեպերը երեսապատել ալյուկաբոնդով: Գլխավոր հատակագծում դպրոցի ամբողջ տարածքը բարեկարգված է, նախագծված է 4.0 x 8.0մ ջերմոց, 30x18մ բաց ցանկապատված մարզադաշտ, տնտեսական բաք, ինչպես նաև էլեկտրամարտկոցային ֆոտովոլտային արևային վահանակների համար ցանկապատով տարածք :

Դպրոցի հողամասը ամբողջ պարագծով ցանկապատված է:

ԿՈՆՍՏՐՈՒԿՏՈՐԱԿԱՆ ՄԱՍ

Մոդուլային կրթահամալիրի բազմակի օգտագործման տիպային շենքի կառուցման տիպային նախագծի կոնստրուկտորական մասը իրականացված է համաձայն Պատվիրատուի կողմից տրված տեխնիկական առաջադրանքի, ճարտարապետական լուծումների և համապատասխանում է ՀՀ գործող նորմերին և կանոններին:

Կառույցը բաղկացած է 3 մասնաշենքից, որոնք իրարից անջատված են հակասեյսմիկ կարանով՝

- դպրոցի մասնաշենք - 1 -:- 9 առանցքներում,
- մանկապարտեզի մասնաշենք - 3* -:- 1* առանցքներում:
- դահլիճների մասնաշենք՝ 10-:-13 առանցքներում:

Դպրոցի մասնաշենքը հատակագծում ուղղանկյուն է՝ 43.8x20.4մ առանցքային չափերով: Շենքը 2 հարկանի է, 2 -:- 6 առանցքներում ունի նկուղային հարկ, որը ծառայում է, որպես ապաստարան: Հարկերի բարձրությունը 1-:-9 առանցքներում 3.30մ է:

Կրթահամալիրի 0.00 նիշում կառուցապատման մակերեսը կազմում է 2118,22 մ^2:

Կառույցի կոնստրուկտիվ համակարգը շրջանակային է: Հիմնակմախքը իրականացված է տարածական շրջանակակապային համակարգով միաձույլ երկաթբետոնից: Հիմնակմախքի լայնական շրջանակները 1-:-9 առանցքներով 3 և 4 թռիչքանի են: Թռիչքները 1.60, 6.80մ:

Լայնական շրջանակների քայլը՝ 5.40, 6.00:

Դահլիճների մասնաշենքը հատակագծում ուղղանկյուն է՝ 37.2x18.0մ առանցքային չափերով: Այն մեկ հարկանի է փոփոխական բարձրությամբ՝ 6.100-:-8.800մ:

Կառույցի լայնական մեկ հարկանի շրջանակները իրականացված են միաձուլ ե/բ սյուներով՝ 60,0x30,0սմ, մետաղական ֆերմաներով /1.8մ բարձրությամբ/:

Լայնական շրջանակների քայլը՝ 3.00, 3.40, 4.30մ:

Մանկապարտեզի մասնաշենքը հատակագծում ուղղանկյուն է, 13.6 x 24.2մ առանցքային չափերով: Այն 2 հարկանի է, հարկերի բարձրությունը 3,30մ է:

Կառույցի կոնստրուկտիվ համակարգը շրջանակային է: Հիմնակմախքը իրականացված է տարածական շրջանակակապային համակարգ միաձույլ երկաթբետոնից: Հիմնակմախքի լայնական շրջանակները 3*-:-1* առանցքներով 4 թռիչքանի են (թռիչքները՝ 6.00, 6.80, 5.40, 6.00մ), իսկ երկայնական շրջանակները 2 թռիչքանի (թռիչքները՝ 6.80մ):

Հաշվարկները իրականաացված են LIRA-SAPR ծրագրերով: Սեյսմիկ ազդեցությունից հաշվարկի համար հիմնական ելակետային տվյալներ:

Հաշվարկը ըստ ՀՀՇՆ 20.04-2020 «Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Շինարարական նորմեր» ՝

- սեյսմիկ գոտի՝ - 1 (a=300 սմ/վրկ2),
- գրունտի կարգը - III (K0=1,1)
- թույլատրելի վնասվածքների գործակիցը - K1=0,4,

- պատասխանատվության գործակիցը K2=1,3 (աղյուսակ 9),
- շենքի հարկերի տեղափոխությունները և շեղվածքները որոշվել են ՀՀՇՆ 20.04-2020-ի 41 կետի համաձայն:

Կառույցի կոնստրուկտիվ համակարգը կարկասային է միաձույլ երկաթբետոնից: Որպես կրող կոնստրուկցիա ծառայում է տարածական ե/բ միաձույլ շրջանակակապային հիմնակմախքը հիմնային սալով: Ծածկերը միաձույլ ե/բ սալեր են, որոնք ուղղաձիգ կրող տարրերի միջև հանդիսանում են հորիզոնական կոշտ սկավառակներ:

Հիմքերը ժապավենային են միաձույլ երկաթբետոնե փոխխաչվող տավրաձև հիմքի հեծանների տեսքով, 180սմ ներբանի չափով և 90սմ բարձրությամբ: Ինչպես նաև հիմնային սալով՝ 30 սմ հաստությամբ, ամբողջ մասնաշենքի մակերեսով:

Սյուներն ունեն 40x40սմ և 50x50սմ հատվածքներ:

Պարզունակները նախատեսված է իրականացնել 40x60(h)սմ, 40x70(h)սմ հատվածքներով:

Կոշտության պատերը միաձույլ երկաթբետոնից են 20սմ հաստությունով, ամրանավորված կրկնակի ամրանային ցանցերով:

Ծածկերը պարագծով հենված միաձույլ երկաթբետոնե հոծ սալեր են 20սմ հաստությամբ: Ե/բ սալերը ամրանավորված են երկակի ստորին և վերին գոտիների ամրանավորմամբ:

Ստորգետնյա արտաքին պատերը միաձույլ երկաթբետոնից են, 40սմ հաստությամբ, որոնք ամրանավորված են կրկնակի ամրանավորմամբ: Ստորգետնյա արտաքին պատերը ինչպես նաև հիմքը հարկավոր է արտաքին կողմից ջրամեկուսացնել 2 շերտ բիտումի քսուկով և «իզոգամ» տեսակի գլանափաթթոցային ջրամեկուսիչ նյութով:

Աստիճանավանդակները միձույլ երկաթբետոնից են:

Արտաքին պատերը նախատեսված են ամրանավորված թեթև բետոնե բլոկներից, որոնք շենքի հիմնակմախքին նախատեսված է կապել ճկուն կերպով, ըստ նախագծում տրված լուծման: Արտաքին պատերը նախատեսված են որպես ինքնակրող տարրեր և չպետք է մասնակցեն շենքի հիմնակմախքի աշխատանքին:

Տանիքը լանջավոր է, ջրահեռացումը կազմակերպված:

Շենքի սեփական տատանումների առաջին ձևի պարբերությունների արժեքները երկայնական (X) և լայնական (Y) ուղղություններով համապատասխանաբար կազմում են՝

Tx1 = 0,128վրկ

Ty1 = 0,136վրկ

Շենքի առավելագույն շեղվածքի մեծությունները կազմում են

X ուղղությամբ – 3,85մմ

Y ուղղությամբ – 1,94մմ

Առավելագույն տեղափոխությունների մեծությունները կազմում են

X ուղղությամբ – 5,10մմ

Y ուղղությամբ – 3,63մմ

Կառույցի ընդհանուր զանգվածը կազմում է 14254,4տ, որից սեփական զանգվածը կազմում է 9447,26տ:

Սպորտդահլիճի ծածկը իրականացված է մետաղական ֆերմաների տեսքով հենված ե/բետոնե սյուների վրա: Ֆերման զուգահեռ գոտիներով է: Ֆերմայի վերին և ներքին գոտիներով իրականացված է հորիզոնական կապեր: Տանիքը իրականացված է փայտե ծպեղներով, որոնց ներքևի մասում ամրանում է փայտատաշեղային սալ, որի վրա տեղադրվում է բազալտե մանրաթելերով ջերմամեկուսիչ սալ:

Դպրոցի 1-:-9 առանցքներում և մանկապարտեզի տանիքը իրականացված է փայտե կոնստրուկցիաներով:

Ծպեղների վրա իրականացված է կավարամած, որի վրա ամրանում է փայտատաշեղային սալ: Այն հանդիսանում է փաթթոցային տանիքի հիմք:

Օգտագործված գրականություն՝

ՀՀՇՆ 20.04-2020 «Երկրաշարժադիմացկուն շինարարություն»

ՀՀՇՆ 52-01-2010 «Բետոնե և երկաթբետոնե կոնստրուկցիաներ»

ՀՀՇՆ IV-13.01-96 «Քարե և ամրանաքարե կոնստրուկցիաներ»

ԷԼԵԿՏՐԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԱՍ

Էլեկտրամատակարարում: Էլեկտրական սնուցման համակարգերի և արտաքին ցանցերի իրականացումը կատարվելու է անմիջապես «ՀԷՑ» ՓԲԸ-ի կողմից: «ՀԷՑ» ՓԲԸ-ն պատասխանատու է լինելու դրանց շահագործման և անխափան աշխատանքի համար, իսկ տրանսֆորմատորային կայանն ապահովված է լինելու յուղահավաք համակարգով՝ արտակարգ իրավիճակների դեպքում հնարավոր արտանետումների պահման համար:

Նախագիծը մշակված է համաձայն ՊՄԷ-99 և ՀՀՇՆ31-03.01-2014 դրույթների:

Դպրոցի էլ.մատակարարումը իրականացվում է 400կՎԱ հզորությամբ լրակազմ տրանսֆորմատորային ենթակայանից:

Ըստ էլ.մատակարարման հուսալիության աստիճանի շենքի հոսանքասպառիչները դասվում են 2 կարգի:

Դպրոցի սնուցումը իրականացվում է 2 մալուխային գծերով:

Էլ.լուսավորությունը նախատեսված է հետևյալ տեսակների՝

1. բանվորական,

2. վթարային- էվակուացիոն,

Բաշխիչ վահանից տարված են սնող գծեր դեպի խմբային լուսավորության և ուժային վահաններ: Սնող գծերը նախատեսված է իրականացնել պղնձե մալուխներով:

Խմբային ցանցը նախատեսված է ВВг нг-LS մակնիշի մալուխով ճկուն խողովակների մեջ:

Անջատիչները և վարդակները դասասենյակներում տեղադրվում են հատակից 1.8մ բարձրության վրա, այլ սենյակներում՝ հատակից 0.8մ, վահանակները՝ 1.5մ բարձրության վրա հատուկ պատրաստված խորշերի մեջ:

Բոլոր լուսատուների և վարդակների սնուցումը իրականացնել 3 հաղորդալարերով, նեռարյալ PE հաղորդալարը, իսկ բոլոր էլեկտրական սարքավորումների մետաղական կորպուսները կզրոյացվեն և կհողանցվեն:

Հրդեհի դեպքում նախատեսված է օդափոխության ամբողջ համակարգի անջատում:

Հողանցման և անվտանգության պաշտպանական միջոցներ:

Նախագծով ընդունված է հողանցման TN-C-S համակարգը:

Որպես պաշտանիչ միջոց նախատեսված է իրականացնել հողանցման օջախ 4 Օհմ դիմադրությամբ:

Շենքի անվտանգությունը ապահովելու համար կիրառվում են համալիր միջոցներ՝ Էլ.էներգիայի բաշխումը եռաֆազ ցանցում կատարվում է հինգ հաղորդալարով (L1,L2,L3,N,PE), միաֆազ ցանցում երեք հաղորդալարով (L1,N,PE), անցկացնելով առանձին PE հաղորդալարը, սկսած մուտքի վահանից:

Բոլոր էլ.մոնտաժային աշխատանքները կատարել համաձայն գործող էլեկտրատեխնիկական կանոնների և նորմերի:

Նախագծի հիմնական ցուցանիշներ.

Էլեկտրամատակարարման կատեգորիան - երկրորդ

Լարում – 380/220 Վ

Հաշվարկային հզորություն – 311 կՎտ

Հաշվարկային հոսանք – 475 Ա

Տարածքի լուսավորության համար ընտրված են ընտրված են 100 Վտ հզորությամբ լուսադիոդային լուսատուներ՝ տեղադրված 8մ բարձրությամբ մետաղական հենասյուների բարձակների վրա:

Արևային վահանակների տեղադրում: Նախագծով նախատեսվում է 400 կՎտ դրվածքային հզորությամբ արևային ֆոտովոլտային համակարգի տեղակայում նոր կրաթահամալիրի տարածքում: Արևային ֆոտովոլտային համակարգը կազմված է 320 հատ ֆոտովոլտային վահանակներից:

ՖՎ կայանի հենակառուցվածքը մոնտաժվելու է նախապես կառուցված ե/բ հիմքերի վրա՝ զոդման միջոցով: Փոխակերպիչները փոփոխական հոսանքի կողմից կարճ միացումներից և իմպուլսային գերլարումներից պաշտպանելու համար փոփոխական հոսանքի համակցման տուփի (ՓՀՀՏ) մեջ տեղադրվում են անհատական և մուտքային ինքնավար անջատիչներ, իմպուլսային գերլարման սահմանափակիչ: ՖՎ համակարգը բաշխիչ էլեկտրական ցանցին միանում է ՓՀՀՏ-ն ենթակայանից սնվող մալուխով էլեկտրականապես միանալու միջոցով: Հաստատուն հոսանքի մալուխները մոնտաժվում են հենակառուցվածքի վրա ձգման, իսկ շարքից շարք՝ խրամուղով անցկացման եղանակով: ՖՎ կայանի էլեկտրաէներգիայի հաշվառումը «Հայաստանի էլեկտրական ցանցեր»-ի հետ անհրաժեշտ է իրականացնել դարձափոխիչային էլեկտրոնային երկսակագնային էլեկտրական հաշվիչի միջոցով, եռաֆազ սնուցմամբ:

ՋԵՌՈՒՑՈՒՄ ԵՎ ՕԴԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

1.Ընդհանուր տվյալներ

1.Փոքրաքանակ երեխաներով համալրված հանրակրթական դպրոցների տիպարային (մոդուլային) շենքի ջեռուցման և օդափոխության համակարգերի նախագիծը կատարված է ճարտարապետական գծագրերի շինարարական նորմերի հիման վրա

ա) ՇՆ IV-12.02.01-04 "Ջեռուցում, օդափոխություն և օդի լավորակում"

բ) ՀՀՇՆ II-7.01-2011 "Շինարարական կլիմայաբանություն"

գ) ՀՀՇՆ II-Լ. 8-71 "Հասարակական սննդի ձեռնարկություն "

դ) ՀՀՇՆ 31-06-2009 "Հասարակական շենքեր և կառույցներ"

ե) ՀՀՇՆ 24.01-2016 "Շինարարական ջերմաֆիզիկա շենքերի պատող կոնստրուկցիաների"

2. Կլիմայաբանական տվյալներ

Տարվա ցուրտ ժամանակաշրջանի կլիմայական հարաչափերը՝

- Ջեռուցման, օդափոխության համակարգերի համար (ամենացուրտ հնգօրյակի) t= -20Եc,

- Ջեռուցման ժամանակաշրջանի տևողությունը (պայմանական) -20Եc 233 օր,

- Ջեռուցման ժամանակաշրջանի միջին ջերմաստիճանը (պայմանական) -20Եc -1.0Եc,

Ջերմամատակարարումը իրականացվում է սեփական կաթսայատնից, որը տեղակայված է -3.20 նիշի վրա:

Ջերմատարը՝ ջուր T1=80ԵC, T2=65ԵC բոլոր համակարգերի համար:

3.Ջեռուցում

1.-3.20 հատակագծում ջեռուցումը նախատեսված է էլեկտրական յուղային ռադիատորներով :

2. Փոքրաքանակ երեխաներով համալրված հանրակրթական դպրոցի, երկհարկանի մանկապարտեզի, դպրոցի, սպորտսրահի և հանդիսությունների դահլիճի ջեռուցման աշխատանքային նախագիծը նախատեսված է ջրային, երկխողովականի, ջրի մեխանիկական շրջանառությամբ:

3. Որպես ջեռուցման սարքեր նախատեսված են ալյումինե ռադիատորներ բացառությամբ սպորտսրահից որտեղ նախատեսված են ջերմային օդամղիչներ:

4. Ջեռուցման սարքերի ջերմատվությունը կարգավորելու համար նախատեսված են ջերմակարգավորիչ փականներ մատակարարի վրա, իսկ հետադարձի վրա՝ փակող փականներ:

5. Սենյակների ներսի օդի ջերմաստիճանները ընդունված են համաձայն գործող նորմերի:

6.Օդի հեռացումը համակարգից կատարվում է կանգնակների վրա տեղադրված ավտոմատ օդահան փականների և ջեռուցման սարքերի օդահանների միջոցով :

7.Դպրոցում մատակարար խողովակը անցնում է ձեղնահարկով, իսկ հետադարձը՝ +0.100 նիշի հատակի միջով: Մանկապարտեզում, սպորտ. սրահում և հանդիսությունների դահլիճում մատակարար և հետադարձ խողովակները անցնում են հատակի միջով :

8.Մատակարար և հետադարձ խողովակները մեկուսացվում են ռետինե խողովակաձև ջերմամեկուսիչով:

9.Մոնտաժումից հետո ամբողջ համակարգը ենթարկվում է հիդրավլիկ փորձարկման, որից հետո կատարում են խողովակների փչամաքրում:

10.Համակարգերից ջրի դատարկումը կատարվում է կաթսայատնից:

4. Օդափոխություն

Դպրոցում նախատեսված են ընդհանուր ներածման և արտածման օդափոխություն մեխանիկական եղանակով՝

Մեխանիկական ներածման և արտածման օդափոխություն նախատեսված է նկուղային հարկից (Ն1,Ա1), բուֆետի և քիմիայի կաբինետից (Ն2Ա2), հանդիսությունների դահլիճի համար (Ն4,Ա4) և մարզադահլիճից (Ն3,Ա3): Մարզադահլիճի և հանդիսուփյունների դահլիճի համակարգերը աշխատում են պարբերաբար ըստ պահանջի:

Դասարանների և կաբինետների համար նախատեսված է ներածման -արտածման ռեկուպերացիոն սարքեր, որոնք տեղադրված են դասասենյակի արտաքին պատերին: Ներածման և արտածման համակարգերը, նախատեսված են վերաօգտագործման հատվածամասերով:

Ընդունված օդափոխության սխեման թույլ է տալիս տնտեսել ջերմության ծախսը:

Որպեսզի աշխատող օդափոխիչներից բացառել աղմուկի տարածումը, ներածման և արտածման օդատարների վրա , օդափոխիչից հետո, նախատեսված են աղմկախլացուցիչներ:

Քիմիայի կաբինետի արտածման պահարանից նախատեսված է մեխանիկական արտածում (Ա19): Արտածված օդը կոմպենսացնելու համար նախատեսված է Ն2 ներածման համակարգ:

Դպրոցի -3.30 նիշում օդի ներածումը և արտածումը նախատեսված է իրականացնել մեխանիկական դրդմամբ Ն1 Ա1 համակարգով, որի սարքը տեղադրված է ձեղնահարկում:

Սենյակներում ներածման և արտածման օդաքանակները հաշված են համաձայն գործող նորմերի:

Ինքնուրույն արտածման համակարգ մեխանիկական դրդմամբ նախատեսված է սան հանգույցներից կանալային օդափոխիչներով:

Ներածման և արտածման օդատարների բոլոր ճյուղավորումների վրա նախատեսված են օդի կարգավորիչ փականներ ձեռքի կարգավորմամբ:

Ընդհանուր օդափոխության օդաքանակները որոշված են համաձայն СНиП 2.08.02.-89*:

Բոլոր օդատարները ընդունված են նրբաթիթեղ ցինկապատ պողպատից, որոնց համապատասխան հաստությունները նշված են անվանացանկում,իսկ հանդիսությունների դահլիճի համար ընտրված են դեկորատիվ օդատարներ:

ՋԵՐՄԱՄԵԽԱՆԻԿԱԿԱՆ ՄԱՍ

1. Ելակետային տվյալներ

1. Փոքրաքանակ երեխաներով համալրված հանրակրթական դպրոցների տիպարային (մոդուլային) շենքի կաթսայատան նախագիծը կատարվել է համաձայն՝

ա) ջերմային ծախսերի: Տես աղյուսակ N1:

բ) ճարտարապետաշինարարական գծագրերի:

գ) կաթսայատան տեղակայման նորմերի (ՇՆ և կ II-35-76):

2. Նախագծվող կաթսայատունը սպասարկում է միայն դպրոցին:

3. Ջերմամատակարարման համակարգը փակ է:

4. Ջերմատարը ջուր՝ t1=80Եc, t2=65Եc (հաշվարկային):

5. Կաթսայատան ջրամատակարարումը՝ ջրմուղից:

2. Հիմնական տեխնիկական լուծումներ

1. Ելնելով ջերմային հաշվարկային ծախսերից նախագծում նախատեսված են երկու ավտոմատացված ջրային էլեկտրոկաթսաներ 120կՎտ ջերմային հզորությամբ յուրաքանչյուրը (ջերմաստիճանային -25°/C ռեժիմների համար):

2. Կաթսայատանը տեղակայված են կաթսաները, թաղանթային ընդարձակիչ անոթը, պոմպերը, կոլեկտորները:

3. Կաթսայատան օդափոխությունը նայել -3.20 նիշի օդափոխության նախագծում:

3. Ջերմամեկուսացում

1. Ջերմային կորուստները նվազագույնի հասցնելու նպատակով T1, T2, T3 և T4 խողովակները մեկուսացվում են ռետինե խողովակաձև ջերմամեկուսիչով:

4. Ընդհանուր ցուցումներ մոնտաժի վերաբերյալ

1. Կաթսայատան խողովակաշարերը մոնտաժվում են էլեկտրոեռակցումային ԳՈՍՏ 10704-91 և ջրագազամուղային ԳՈՍՏ 32-62-82 պողպատյա խողովակներով:

2. Բոլոր խողովակաշարերը մոնտաժումից հետո ենթարկվում են հիդրավլիկ փորձարկման:

3. Խողովակաշարերը մոնտաժվում են I=0,002մ/մ թեքությամբ, խողովակաշարերի վերին բարձր կետերից կատարվում է օդի հեռացում, իսկ ներքևի ցածր կետերից /ջրի դատարկում:

ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՄԱՍ

Ջրամատակարարման և ջրահեռացման մասի նախագիծը իրականացված է հիմք ունենալով նախագծման առաջադրանքը: Որպես ելակետային տվյալներ ծառայել են ճարտարապետական հատակագծերը, գլխավոր հատակագիծը և տեղանքի գեոդեզիական հանույթը:

Նախագծվող կրթահամալիրի ջրամատակարարման և ջրահեռացման գործընթացները կազմակերպվելու են գործող շինարարական նորմերի ու կանոնների (ՇՆԿ) համաձայն:

Որպես հիմնական նորմատիվային փաստաթղթեր ծառայել են.

- ՀՀՇՆ 40-01.01-2014 Շենքերի ներքին ջրամատակարարում և ջրահեռացում,
- ՀՀՇՆ 21-01.01-2014 Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգություն:

Նախագծով նախատեսված են հետևյալ համակարգերը՝

- Խմելու տնտ. ջրամատակարարում
- Տաք ջրամատակարարում:
- Հրդեհամարման համակարգ:
- Կենցաղային կոյուղի:
- Ջրամատակարարում:

Նախագծվող փոքրաքանակ երեխաներով համալրված հանրակթական դպրոցների ջրամատակարարման համակարգը սնվում է նկուղային հարկում տեղադրված ռեզերվուարներից 2x(1.7x2.3xh1.8մ W=7մ³), որոնց կից տեղադրվում է պոմպային համակարգ բաղկացած 4 պոմպերից, որոնցից 2-ը աշխատում են ջրամատակարարման կարիքների համար, իսկ մյուս 2-ը միանում են հրդեհի դեպքում Wilo SiBoost Smart 4 HelixVE 404, Q=5.0լ/վրկ, H=30.0մ, N=4x0.75կՎտ, 3~ 400 V: Ջրամատակարարման ներքին ցանցը նախատեսված է պոլիպրոպիլենային PPR PN10 խողովակներից: Բոլոր խողովակները ջերմոմեկուսացվում են 10մմ հաստությամբ ռետինե խողովակակտորներով:

Տաք ջրամատակարարման համակարգը սնվում է նկուղային հարկում նախատեսված կաթսայատնից: Տաք ջրամատակարարման համակարգը նախատեսված է պոլիպրոպիլենային PPR PN20 խողովակներից, որոնք ջերմոմեկուսացվում են 10մմ հաստությամբ ռետինե խողովակակտորներով:

Կենցաղային կոյուղի

Կենցաղային կոյուղու ցանցը համակցված է: Շինության վերգետնյա հատվածի կոյուղին ինքնահոս հեռանում է բակային ցանց, իսկ նկուղային հարկում նախատեսված սանհագույցների կոյուղին բակային ցանցի է միանում կույուղու ճնշումային սարքավորման օգնությամբ (Կոյուղու ճնշումային սարքավորում:

Wilo DrainLift BOX-32/11HD, Q=2.0լ/վրկ, H=6.0մ, N=0.75կՎտ, 1~ 230 V)

Համակարգը մոնտաժվում է կոյուղու PVC Մ50 և Մ110մմ խողովակներով:

Կառուցել de160մմ, L=192.0մ երկարությամբ կենցաղային կոյուղագիծ, պոլիէթիլենե ակոսավոր խողովակներով: Կրթահամալիրից դուրս եկող կենցաղային կայուղաջրերը հավաքվում և տեղափոխվում են դեպի մաքրման կայան: Տեղադրվելու է Topac-15 տեսակի մարքման կայան՝ 3.0խմ օրական ծավալով: Մաքրման կայանից մշակված ջուրը կուտակվելու է ե/բ ռեզերվուարում հետագայում ոռոգման նպատակներով օգտագործելու համար: Կոյուղագծի վրա նախատեսվում է կառուցել թվով 15 հատ ե/բ դիտահորեր:

Մաքրման արդյունքում առաջանալու է տիղմ, որը նստեցումից հետո վերադառնում է առաջին փուլ: Ավելցուկային տիղմը տեղափոխվելու է աղբավայր՝ մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով: Պարզեցված ջուրն ինքնահոս հեռացվելու է ավազի շերտերով՝ ֆիլտրվում է: Այն կարելի է օգտագործել ոռոգման նպատակով:

Պարզեցված ջրի ավելացված ծավալը տարածքից կհեռացվի դրենաժային համակարգով:

ՀՐԴԵՀԱՄԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Շենքում նախատեսված է հրդեհամարման համակարգ համաձայն ՀՀՇՆ 40-01.01-2014-ի պահանջի՝ 2 շիթ 2.5լ/վրկ ելքով: Համակարգը սնվում է նկուղային հարկում նախատեսված ռեզերվուարներից 2x(1.7x2.3xh1.8մ W=7մ3), որոնցում առկա է հրդեհամարման անհրաժեշտ ծավալը: Հրդեհամարման համակարգը մոնտաժվում է պողպատյա էլ-եռակցման Մ76x3մմ և Մ57x3մմ տրամագծով պողպատյա էլ եռակցման խողովակներից:

Կրթահամալիրի տաք և սառը ջրամատակարարման հաշվարկային ելքերը որոշվել են հաշվի առնելով դպրոցի և մակարարտեզի տեխնոլոգիական պահանջները և սպասարկվող անձանց քանակը: Համաձայն գործող շինարարական նորմերի՝ անհրաժեշտ ջրի քանակը (ներառյալ տաք ջուրը) հաշվարկվում է Qmax/վրկ3.0 լ/վրկ, իսկ շենքի հրդեհմարման համար անհրաժեշտ ջրի քանակությունը՝ 2.5լ/վրկ (2 շիթ): Հրդեհաշիջման համար պահանջվող ջրի ելքը հաշվարկվել է համաձայն «Շենքերի ներքին ջրամատակարարում և ջրահեռացում» ՀՀՇՆ.40-01.01-2014 նորմերի:

Հրշեջ պահարանները համալրված են հրշեջ ծորակներով և l=20.0մ երկարության փողրակներով:

ՀՐԴԵՀԻ ԱՀԱՋԱՆԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Փոքրաքանակ երեխաներով համալրված հանրակրթական դպրոցների տիպարային /մոդուլային/ շենքի աշխատանքային գծագրերը կատարվել են ճարտարապետա-շինարարական հատակգծերի և տեխնիկական առաջադրանքի հիման վրա: Նախագծի մշակման համար օգտագործվել են հետևյալ նորմատիվ փաստաթղթերը՝

- ՀՀՇՆ II-8.04-02-2005 - “ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՎՏՈՄԱՏԻԿԱ”:
- ԷՍԿ - “ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆՔՆԵՐԻ ՍԱՐՔՎԱԾՔԻ ԿԱՆՈՆՆԵՐ”:

Ավտոմատ հրդեհի ահազանգման համակարգը նախատեսված է՝

- ✓ հրդեհի կենտրոնի հայտնաբերման համար,

- ✓ ազդարարման համակարգի միացման համար:
- ✓ օդափոխության և ծխահեռացման համակարգերի ղեկավարման համար:

Համակարգը բաղկացած է ընդունիչ հսկիչ սարքից՝ РУБЕЖ-2ОП R3 մակնիշի /2 օղակ, ամեն օղակին մինչև 250 հասցեային տվիչներ և այլ հասցեային սարքավորումներ միացնելու հնարավորությամբ/՝պատի վրա տեղակայման բարձրությունը h=1500մմ: Վահանակին միացվում են հասցեային օպտիկական ազդասարքերը, հասցեային շարժման և մագնիսակոնտակտային ազդասարքերը, հասցեային հրդեհի՝ ձեռքով գործարկվող ազդասարքերը, հասցեային լուսաձայնային ազդարարիչները, հասցեային ինտերֆեյսային մոդուլը, հասցեային սարքը՝ անալոգային ազդասարքերը հասցեային սարքին միացնելու համար, ռելեների մոդուլները՝ ահազանգի դեպքում կատարող մեխանիզմներին գործարկելու համար:

Հրդեհի ահազանգման համակարգի ընդունիչ հսկիչ սարքը տեղակայվում է շինության առաջին հարկում /0,100 նիշ/ գտնվող պահակակետում, որտեղ իրականացվում է շուրջօրյա հերթապահություն: Ընդունիչ հսկիչ սարքը համալրված է ԱԻՆ միանալու բջջային կապով աշխատող ավտոմատ զանգահարող սարքով:

Տվյալ շինությունում բացառությամբ սանհանգույցների, թաց գործընթացով և 2 մ^2 պակաս մակերեսով սենքերի, բոլոր տարածքներում նախատեսված են հասցեային ծխի ազդասարքեր, իսկ միջանցքներում, էվակուացիոն ելքերի և աստիճանավանդակների մոտ նախատեսված են հրդեհի հասցեային ձեռքի ազդարարիչներ /h=1500մմ/: Մարզասրահում նախատեսված են ծխի գծային ազդասարքեր ռեֆլեկտորով, ազդասարքերը տեղակայվում են h=5400մմ բարձրության վրա պատի վրա, իսկ ռեֆլեկտորները h=7200մմ բարձրության վրա ազդասարքի դիմացի պատին:

Շինության ընդհանուր օգտագործման տարածքներում նախատեսված են լուսաձայնային ազդարարիչներ՝ ահազանգի դեպքում լուսաձայնային ինդիկացիայի համար, տեղակայման բարձրությունը h=2800մմ:

Շինության նկուղային հարկում նախատեսվում է հասցեային ռելեային մոդուլ՝տեղակայման բարձրությունը h=1600մմ, հրդեհի ահազանգի դեպքում վերելակի ղեկավարման, օդափոխության համակարգի ներածման սարքավորումները հրդեհի դեպքում ավտոմատ անջատելու, ծխահեռացման կափույրների ակտիվացման համար: Ռազմագիտության դասասենյակում և զենքի պահոցում նախատեսվում է դռների բացման հասցեային մագնիսական կոնտակտներ և շարման հայտնաբերման հասցեային ազդասարքեր՝

տեղակայման բարձրությունը h=2300մմ, որոնք միանում են հրդեհի ահազանգման համակարգի հասցեային օղակին և ղեկավարվում են հասցեային ինտերֆեյսային մոդուլին միացված պրոքսիմիթի քարտերի ընթերցիչ սարքի՝տեղակայման բարձրությունը h=1600մմ, միջոցով:

Բոլոր հասցեային ազդասարքերի, ազդարարիչների և այլ հասցեային միավորների միացումը հասցեային օղակին կատարվում են КСРЭВнг(А)-FRLS 2х0.50 այրում չտարածող մալուխներով և նրանց սնումը կատարվում է հասցեային օղակից: Մալուխները անց են կացվում պատերի և առաստաղի վրայով բաց կամ սվաղի տակ:

Համաձայն գործող նորմերի հրդեհի ահազանգման համակարգի էլեկտրասնուցումը հուսալիության տեսանկյունից վերագրվում է 1-ին կատեգորիայի: Այդ պատճառով էլեկտրասնուցումը կազմակերպվում է անխափան սնուցման աղբյուրներից:

Հիմնական սնուցումը 220Վ 50Հց

Պահուստային սնուցումը՝ 2 հատ մարտկոցներից՝ 12Վ 7Ա

Հիմնական սնուցման բացակայության պայմաններում մարտկոցները թույլ են տալիս համակարգի աշխատունակությունը պահպանել հերթապահ ռեժիմում 24 ժամ, իսկ ահազանգի ռեժիմում 3 ժամ:

Էլեկտրասարքավորման պահպանիչ հողանցումը պետք է իրականացվի ԷՍԿ-ի համաձայն:

ՏԵՍԱՀՍԿՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Փոքրաքանակ երեխաներով համալրված հանրակրթական դպրոցների տիպարային /մոդուլային/ շենքի աշխատանքային գծագրերը կատարվել են ճարտարապետա-շինարարական հատակգծերի և տեխնիկական առաջադրանքի հիման վրա:

Տեսահսկման համակարգը բաղկացած է արտաքին և ներքին օգտագործման ընդհանուր քանակով 28 IP տեսախցիկներից, որոնցից 16 տեղակայվում են շինության ներսում՝ միջանցքներում և մուտքերի մոտ առաստաղին, 12 շինության արտաքին հատվածում՝ տեղակայման բարձրությունը h=3000մմ, մուտքերը և հարակից տարածքները հսկելու համար: Բոլոր տեսախցիկներից ստացվող տեսանյութերը տեսագրվում են 32 տեսամուտքով ցանցային տեսագրող սարքի հիշողության մեջ: Ցանցային տեսագրող սարքը համալրվում է 1 հատ 8 ՏԲ

ծավալով կոշտ սկավառակով, որի վրա պահպանվող տեսանյութերի արխիվը կարող է պահպանվել մինչև 14 օր։

Տեսադիտարկումը իրականացվում է 32" LED մոնիտորի վրա։ Հեռահար դիտման համար օգտագործվում է մոնիթորինգի համար նախատեսված հատուկ ծրագրով համակարգչով կամ հեռախոսով։ Բոլոր տեսախցիկների էլ. սնուցումը նախատեսվում է իրականացնել կենտրոնացված՝ պահակակետում տեղադրվող PoE սնուցմամբ ցանցային կուտակիչից։

Միացումը տեսախցիկից մինչև ցանցային տեսագրող սարք իրականացվում է UTP Cat5e մակնիշի մալուխով, որով էլ նաև իրականացվում է տեսախցիկների սնուցումը։ Մալուխները միջանցքներում և հորաններում անց են կացվում հեռահաղորդակցության ցանցերի համար նախատեսված մետաղական մալուխատարերով։

Տեսահսկման համակարգի բոլոր սարքավորումների ընդհանուր սնուցումը իրականացվում է կենտրոնացված՝ UPS 2000 ՎԱ հզորությամբ անխափան սնուցման սարքից։

ԶԱՆԳԻ ԵՎ ԺԱՄԱՑՈՒՅՑԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Ժամացույցային համակարգը ապահովում համակարգին միացված ժամացույցների վրա ակտուալ ժամանակի միաժամանակյա ցուցադրում և ուսումնական հաստատության դասաժամանակի և զանգի կառավարում նախապես ծրագրավորված ժամանակացույցով։

Այն բաղկացած է "ղեկավարող" և "ղեկավարվող" ժամացույցներից, որոնք իրար միանում են 2*0,75 մալուխով, ինչպես նաև զանգերից, որոնք նույնպես միանում են համակարգին 2*0,75 մալուխով։ "Ղեկավարվող" ժամացույցների և զանգերի տեղադրման բարձրությունը միջանցքներում h=2600մմ, իսկ մարզասրահում և հանդիսությունների դահլիճում h=3500 մմ։

ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ ԵՎ ԿԱՆԱՉԱՊԱՏՈՒՄ

Նախագծային փաստաթղթերը պարունակում են առանձին բաժին կրթահամալիրի տարածքի բարեկարգման և կանաչապատման վերաբերյալ, համաձայն որի կառուցապատումից ազատ մնացած տարածքները կբարեկարգվեն և կկանաչապատվեն։ Կրթահամալիրի տարածքի կանաչապատման աշխատանքների նախագծումն իրականացվել է

հաշվի առնելով ՀՀ Կառավարության N 108-Ն (2018 թ.) որոշմամբ բնակավայրերի կանաչ գոտիների չափերին և տեսակային կազմին ներկայացվող պահանջները:

Տարածքը նախատեսվում է կանաչապատել արժեքավոր և տեղանքի բնակլիմայական առանձնահատկություններին համապատասխանող բուսատեսակներիով, ինչպես նաև իրականացնել սամշիտ, սիզամարգեր և ստեղծել ծաղկանոց: Նախատեսվում է իրականացնել նոր ծառատեսակների և թփերի տնկման աշխատանքներ: Տնկվող ծառերի քանակ՝ 144 հատ /ուռենի-2, հացենի-27, եղևնի-11, գիհի-41, ակացիա-32, թեղի-31/:

Տնկարկն իրականացնելու համար կմշակվեն համապատասխան խորության և տրամագծի փոսորակներ: Կանաչապատման նպատակով օգտագործվող լրացուցիչ բուսահողը անհրաժեշտության դեպքում ձեռք է բերվելու ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ պայմանագրային հիմունքներով: Նորատունկ բուսականության խնամքը հետագայում կիրականացվի կրթահամալիրի կողմից, ինչը կներառի նաև նորատունկ կանաչ գոտու վիճակի մշտադիտարկումները, որի ընթացքում կպչողականություն չապահովող ծառատեսակները կփոխարինվեն նորերով:

Կանաչապատ տարածքի ոռոգումը կատարվելու է գործունեության տարածքում տեղադրվող մաքրման կայանից դուրս եկող հոսքաջրերի հաշվին՝ տրամագծով դրենաժային խողովակներով:

<u>Ոռոգման ջրապահանջ</u>

Ոռոգման նպատակով ջրապահանջը որոշվում է СНиП 2.04.02-84-ի համաձայն, այսինքն, 1մ^2 ոռոգման նպատակով անհրաժեշտ է 0.3-0.4լ ջուր, հետևաբար.

W = (M x 0.4) x m, որտեղ

M – կանաչապատման ենթակա տարածքն է ըստ կանաչապատման տեսակային կազմի,

m ոռոգման հաճախականությունը կախված սեզոնից և կլիմայական առանձնահատկությունից,

հետևաբար,

W = 9332.9*0.4*20= 74663.2 լ/ջուր կամ 74.7մ^3/տարի ջուր (տարվա կտրվածքով):

ԱՌԿԱ ՇԵՆՔԻ ԱՊԱՄՈՆՏԱԺՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Քանդման ենթակա շինության մակերեսը կազմում է 1212,9 մ^2: Ապամոնտաժման աշխատանքները կատարվելու են ձեռքով, բահերով և մեխանիզմներով՝ մի քանի փուլերով:

Քանդման արդյունքում առաջանալու են տարբեր տեսակի թափոններ, խիստ մոտարկված հաշվարկներով մոտ 5200մ^3 շինաղբի տեսքով, ինչպես նաև շինարարական տարբեր նյութեր՝ փայտ, պատուհաններ, մետաղական մասեր, քար և այլն: Քանդման արդյունքում առաջացող թափոնները տարանջատվելու են և կուտակվելու են առանձին: Օգտագործման համար պիտանի թափոնները կենթարկվեն երկրորդային օգտագործման, իսկ մնացածը տեսակավորվելու են, հանձնվելու են համապատասխան մասնագիտական կազմակերպություններին կամ տեղափոխվելու են աղբավայր:

Ապամոնտաժման և քանդման աշխատանքները կիրականացվեն փուլերով: Ապամոնտաժման և քանդման աշխատանքները կիրականացվեն հիմնական շինության կառուցումից առաջ՝ շինարարական հրապարակի նախապատրաստական աշխատանքների իրականացումից հետո:

1-ին փուլում կապամոնտաժվեն բոլոր ճաղաշարերը, դուռ պատուհանները, ներսի սարքավորումները, կախովի առաստաղները, համընթաց կմաքրվեն և կհեռացվեն կենցաղային ու շինարարական թափոնները:

ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

Ներկայացվող գործունեության ընթացքում նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները.

- նոր կրթահամալիրի կառուցում,
- կրթահամալիրի տարածքի բարեկարգում և կանաչապատում:

Շինարարական հրապարակի կազմակերպումը կիրականացվի բացառապես նախատեսվող գործունեության տարածքի սահմանների ներսում, որի կազմակերպման համար հաշվի են առնված գործող նորմերով պահանջվող միջոցառումները, մասնավորապես.

- տարածքի ժամանակավոր ցանկապատում՝ ըստ անհրաժեշտության,
- շին. հրապարակի լուսավորության ապահովում,
- ժամանակավոր կառույցների տեղադրման աշխատանքեր՝ ապահովելով շին. հրապարակում սանիտարահիգենիկ, կենցաղային և հանգստի պայմանները (ընդմիջման և

հանգստի հարմարություններ, խմելու և կենցաղային կարիքների ջուր, աշղեկի աշխատասենյակ և այլն),

- շինանյութերի ժամանակավոր պահեստավորման և թափոնների կուտակման ժամանակավոր վայրերը,
- շին. աշխատանքներում անհրաժեշտ հիմնական մեքենա-սարքավորումների կայանատեղիները։
- շին հրապարակի տարածքում կնախատեսվի պարզարան, որտեղ կուղղորդվեն անձրևաջրերը և շինարարական հասքաջերը: Պարզարանի պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանի համար, իսկ մնացորդային նստվածքը շինաղբի հետ կտեղափոխվի աղբավայր:
- բետոն մատակարարող և բետնամղիչ մեքենաների լվացումը կիրականացվի շինարարական հրապարակից դուրս, այդ նպատակով նախատեսված վայրում:

Կոմունիկացիաների վերատեղադրում չի նախատեսվում: Շինարարության նախապատրաստական փուլում կիրականացվեն անհրաժեշտ կոմունիկացիաների միացման աշխատանքները՝ գոյություն ունեցող գծերին (էլ. էներգիա, լույս, ջուր)։

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐ

Շինմոնտաժային աշխատանքների իրականացման տեխնոլոգիայի տեսանկյունից շինարարությունն իրականացվելու է ավանդական եղանակներով՝ կիրառելով շինարարական կազմակերպության սեփական շինարարական մեքենաները և մեխանիզմները, իսկ բացակայության դեպքում՝ վարձակալել դրանք:

Մինչ շինարարական աշխատանքներ սկսելը Կապալառուն պետք է ունենա անհրաժեշտ բոլոր համաձայնությունները, տրված ՏԻՄ-երի կողմից՝ կապված գոյություն ունեցող կոմունիկացիաների հետ հատման, շինարարական աղբի տեղափոխման, գործող ավտոճանապարհների տարածքում շինաշխատանքների իրականացման վերաբերյալ և այլն:

Էլեկտրահաղորդիչ գծերի, խմելու ջրի խողովակաշարի կամ այլ կոմունիկացիաների հետ հատման հատվածներում շինարարական աշխատանքները պետք է իրականացվեն համապատասխան մարմինների ներկայացուցիչների ներկայությամբ և թույլտվությամբ: Շինարարության նախապատրաստական փուլում իրականացվելու են հետևյալ աշխատանքները.

- ժամանակավոր ցանկապատի տեղադրում, շին. հրապարակի տարածքում տեղեկատվական վահանակների տեղադրում,
- ըստ անհրաժեշտության՝ կոմունիկացիաների վերատեղադրում և տեղափոխում,
- միացում գոյություն ունեցող կոմունիկացիաներին,
- ժամանակավոր շինությունների և ինժեներական ցանցերի տեղադրում,
- անիվների լվացման կետի տեղադրում,
- անվտանգության նշանների տեղադրում,
- հակահրդեհային միջոցների տեղադրում,
- բանվորների հրահանգավորում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ:

Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը նախատեսվում է իրականացնել լիցենզավորված շինարարական կազմակերպություններից:

Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը նախատեսվում է իրականացնել հետևյալ սխեմայով.

- Շաղախը և բետոնը կառաքվեն մոտակա բետոնաշաղախային հանգույցներից՝ մասնագիտացված տրանսպորտային միջոցներով: Առաքումը կկազմակերպվի այնպիսի պարբերականությամբ, որ ապահովվի շին. աշխատանքների անընդհատությունը:
- Հավաքովի ե/բ կոնստրուկցիաների էլեմենտների պատրաստման համար խորհուրդ է տրվում օգտագործել գործունեության հարակից տարածքների և Երևան քաղաքի շինարարական արդյունաբերության հզորությունները:
- Առանձին ամրանային ձողերը և կմախքները, մետաղական կոնստրուկցիաները, մոնտաժային իրերն ավտոմոբիլային փոխադրամիջոցներով կբերվեն անմիջապես շինարարական հրապարակ, որտեղ կիրականացվի դրանց տեղադրումն ու պահեստավորումը:
- Հարդարման նյութերը կարող են առաքվել ինչպես անմիջապես շինհրապարակ, այնպես էլ շինարարական կազմակերպության բազա՝ հետագա առաքման նպատակով:
- Փոխադրամիջոցների և շինարարական մեքենաների տեխնիկական սպասարկումն ու վերանորոգումը նախատեսվում է իրականացնել համապատասխան մասնագիտացված ավտոտեխսպասարկման կետերում:

Կրթահամալիրի շենքի կառուցման ընթացքում բացառապես կօգտագործվեն նոր և տեխնիկական պահանջներին բավարարող շինարարական նյութեր, որոնք ձեռք կբերվեն

բացառապես լիցենզավորված մատակարարներից: Կբացառվի հրապարակում բետոնաշաղախային խառնուրդի պատրաստման գործընթացը: Համապատասխան մակնիշի բետոնախառնուրդի առաքումը դեպի հրապարակ կիրականացվի բետոնախառնիչներով մոտակա բետոնաշաղախային հանգույցներից՝ կապալառուի հետ պայմանագրային հիմունքներովև համապատասխան առաքման հաճախականությամբ՝ ապահովելով աշխատանքների կատարման անընդհատությունը հրապարակում:

Հրապարակում սորոն նյութերը (ավազ, խիճ, հողային հանույթ և այլն) կպահվեն պաստառներով ծածկված վիճակում, շինարարական կոնստուկցիաները (ամրաններ և այլն) հողային շերտից բարձր և ծածկերի տակ՝ բացառելու համար արտաքին միջավայրի ազդեցությունները և հաշվի առնելով վերջիններիս վարքի կոռոզիոն առանձնահատկությունները, իսկ մնացած շինարարական նյութերի պահապանումը հրապարակում կիրականացվի նորմատիվատեխնիկական պահանջներին համապատասխան:

Շինանյութերի ժամանակավոր պահեստավորումը, թափոնների կուտակման վայրերը և այլն, կազմակերպվելու են բացառապես նախատեսվող գործունեության վարչական տարածքի սահմաններում:

Շինարարական տեխնիկայի մուտքը դեպի գործունեության տարածք նախատեսվում է իրականացնել գոյություն ունեցող ճանապարհով՝ հնարավորինս չխոչընդոտելով գործող դպրոցի բնականոն առօրյային և դպրոցի հարակից տարածքի երթևեկությանը:

Շինարարական աղբը շինհրապարակից պարբերաբար կհեռացվի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր՝ ծածկով ապահովված բեռնատարներով:

Կենցաղային աղբի կուտակման համար շին. հրապարակն ապահովված կլինի համապատասխան աղբամաններով: Կենցաղային աղբը, որի ընդհանուր քանակը շինարարության ողջ ընթացքում կանխատեսվում է մոտ 3տ, կտեղափոխվի աղբահավաք ծառայութուն իրականացնող ընկերության կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Շին. աշխատանքերի ընթացքում կպահպանվեն ՀՀ կառավարության 2002թ. ապրի- լի 20-ի N 438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի պահանջները, համաձայն որի հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին:

Շինարարության նորմատիվ տևողությունը որոշվել է հաշվի առնելով օբյեկտի նշանակությունը, կոնստրուկտիվ բնութագիրն ու շինարարության ընդհանուր ծավալը:

Շինարարության նորմատիվ ժամկետը որոշվել է ըստ օրացույցային ժամանակացույցի և կազմում է 22 ամիս:

Շինարարական աշխատանքների իրականացման համար ներգրավված բանվորական ուժը հիմնականում պետք է լինի բարձր որակավորում ունեցող մասնագետների բրիգադ: Ոչ մասնագիտական բանվորական ուժի կիրառումը պետք է հասցվի նվազագույնի: Շինարարության ընդհանուր ղեկավարությունը իրագործվելու է տեղամասի պետի և աշխղեկի կողմից:

Շինարարության ընթացքում պահանջվող աշխատողների միջինը թիվը գնահատվում է 45 մարդ, որից.

- ✓ ինժիներատեխնիկական անձնակազմ՝ 5 մարդ,
- ✓ բանվորներ՝ 40 մարդ (ներառյալ՝ օժանդակ տնտեսությունները):

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Դիտարկվող տարածքը գտնվում է ՀՀ Լոռու մարզի, Ալավերդի համայնքի Սանահին բնակավայրում: Հողամասի իրավունքի տեսակը՝ անհատույց օգտագործում, հողի նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, իսկ գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ հասարակական կառուցապատման: Հողամասի նպատակային նշանակությունը համապատասխանում է նախագծի իրականացման նպատակներին:

Դպրոցի կառուցման համար հատկացված տարածքն իրենից ներկայացնում է կառուցապատված տարածք: Հողամասի մակերեսը կազմում է 1,6 հա:

Գեոմորֆոլոգիական

Գեոմորֆոլոգիական տեսակետից Հետազոտվող տարածքը գտնվում է Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքում: Ունի լեռնային տեղանք, որը ներկայացված է անտառապատ և ժայռակերտ լեռներով, սարահարթերով, խորը ձորերով, որտեղով հոսում է Դեբեդ գետը: Ծովի մակերևույթից 1016 մ բարձրության վրա:

Ուսումնասիրվող տարածքի երկրաբանական կտրվածքում մասնակցում են նեոգեն ժամանակաշրջանի և չորորդականի հասակի լավաները, որոնք հիմնականում ծածկված են ստորին չորորդականի և պալեոգենի հասակի լճային, լճա-ալյուվիալ և հրաբխային գոյացումներով՝ներկայացված ավազակավային և խճային գրունտներով:

Երկրաբանական կառուցվածքը

Տարածքի երկրաբանական կտրվածքը ուսումնասիրվել է հորատման եղանակով գրունտների լաբորատոր հետազոտությամբ: Ուսումնասիրվող տարածքում առանձնացվել է գրունտների երեք շերտ: Ստորև բերվում է այդ շերտի լիթոլոգիական նկարագրությունը և նրանց ֆիզիկա-մեխանիկական հատկությունները:

Շերտ 1 Հողաբուսական շերտ ավազակավի, կավավազի լցոնումով: Գրունտը ըստ շահագործման դժվարության՝ համաձայն (9ա) I կարգ է:

Շերտ 2 Շերտ 2 Ավազակավեր շագանակագույն բացից մինչև մուգ, թույլ և միջին խոնավ, պինդ թանձրությամբ, խճի ու խճավազի մինչև 10-20% պարունակությամբ: Դելյուվիալ-պրոլյուվիալ առաջացումներ են: Գրունտը ըստ շահագործման դժվարության՝ համաձայն (33գ) III կարգ է:

Շերտ 3 Խճային գրունտ ավազակավի լցոնումով: Գրունտը ըստ շահագործման դժվարության՝ համաձայն (39բ) III կարգ է:

Հիդրոերկրաբանական պայմանները

Ուսումնասիրվող տարածքի ինժեներա-երկրաբանական պայմանների, մասամբ լանջային-գրավիտացիոն պրոցեսների զարգացման վրա ազդող կարևոր գործոններից են հանդիսանում ստորգետնյա ջրերը, որոնց ձևավավորումն ու բնույթը, իրենց հերթին ուղղակիորեն կախված է տարածքի ֆիզիկա-աշխարհագրական պայմաններից և երկրաբանա-լիթոլոգիական առանձնահատկություններից: Հետազոտվող տարածքը կարելի է գնահատել, որպես գրունտային ջրերի սնման, կուտակման և բեռնաթափման շրջան: Ուսումնասիրվող տարածքում մինչև 12մ խորությամբ հորատված հորատանցքերի գրունտային ջրեր չեն հայտնաբերվել և ըստ ֆոնդային տվյալների գտնվում են 15.0մ խորը հորիզոններում:

Երկրաբանական և ինժեներա-երկրաբանական պրոցեսները և երևույթները

Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթներ ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն, բացակայում են:

Համաձայն ՀՀՇՆ 20.04.2020թ.-ի տարածքը գտնվում է I (Առաջին) սեյսմիկ գոտում: Տեղամասի հաշվարկային սեյսմիկությունը ըստ սպասվող առավելագույն արագացման գործակցի (g) արտահայտմամբ կկազմի՝ 0.3g:



Նկար . ՀՀ սեյսմիկ գոտիների քարտեզ

Կառուցապատման ենթական տարածքի ինժեներա - երկրաբանական ուսումնասիրությունների հաշվետվությունը ներկայացված է որպես Հավելված:

Կլիմա

Ալավերդու տարածաշրջանի կլիմայական բնութագրերը ներկայացվում են ստորև՝ հիմք ընդունելով ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2024 թվականի հունվարի 15-ի N 03-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 22-01-2024 «Շինարարական կլիմայաբանություն» Հայաստանի Հանրապետության շինարարական նորմեր ձեռնարկը: Ըստ ձեռնարկի՝ տվյալ տարածքը դասվում է որպես լեռնային, չափավոր խոնավ կլիմայով շրջան: Տարածքի միջին տարեկան օդի ջերմաստիճանը կազմում է մոտ 12,3°C, հուլիսին միջինում՝ +22°C, իսկ հունվարին՝ 1,8°C: Տարեկան տեղումների քանակը կազմում է շուրջ 488 մմ: Ջերմաստիճանային տատանումները մեծ են՝ պայմանավորված տեղանքի

ռելիեֆով և բարձրության փոփոխություններով: Գերակշռող քամու ուղղությունը հյուսիսարևելյան և հարավարևմտյան է, միջին արագությունը՝ 1,7 մ/վրկ: Տարածքը բնորոշվում է բարենպաստ կլիմայական պայմաններով, որոնք հնարավորություն են տալիս կանաչապատման և բացօթյա տարածքների բարեկարգման աշխատանքների արդյունավետ իրականացման համար: Միևնույն ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել գարնանային և աշնանային ամիսներին դիտվող բարձր տեղումները և ապահովել հակահեղեղային ու հակասողողային միջոցառումներ:



Նկար Կլիմայական գոտիների քարտեզ

Աղյուսակ 1 Օդի ջերմաստիճան

Բնակավայրի անվանումը		Միջին ջերմաստիճանն ըստ ամիսների, ˚C												Միջին տարեկան, °C	Բացարձակ նվազագույն, ˚C	Բացարձակ առավելագույն,
		Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր			
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
1.	Ալավերդի	1.8	3.2	6.2	11.7	16.4	19.3	22.8	22.9	18.9	12.7	7.8	3.6	12.3	-17	37

Աղյուսակ 2 Օդի հարաբերական խոնավությունը

Բնակավայրի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը, %																
	ըստ ամիսների												Միջին տարեկան	Ամենացուրտ ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %		Ամենատաք ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %	
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր		Միջին ամսական	Միջին ամսական, ժամը 15-ին	Միջին ամսական	Միջին ամսական, ժամը 15-ին
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18
Ստեփանավան	69	70	71	72	76	78	77	75	76	76	74	71	74	69	55	77	62
Օձուն	66	68	70	71	76	75	71	72	73	75	72	68	71	66	60	71	55

Աղյուսակ 3 Մթնոլորտային տեղումները

Բնակավայրի անվանումը	**Տեղումների քանակը** — **միջին ամսական** / **օրական առավելագույն** — **մմ**													**Տեղումների քանակը նոյեմբեր-մարտ ամիսներին, մմ**	**Տեղումների քանակը ապրիլ-հոկտեմբեր ամիսներին, մմ**
	ըստ ամիսների												**Տարեկան**		
	Հունվար	**Փետրվար**	**Մարտ**	**Ապրիլ**	**Մայիս**	**Հունիս**	**Հուլիս**	**Օգոստոս**	**Սեպտեմբեր**	**Հոկտեմբեր**	**Նոյեմբեր**	**Դեկտեմբեր**			
1	**2**	**3**	**4**	**5**	**6**	**7**	**8**	**9**	**10**	**11**	**12**	**13**	**14**	**15**	**16**
Ստեփանավան	21	27	42	69	114	122	73	56	48	47	34	19	672	143	529
	36	54	37	31	103	63	53	51	41	39	32	30	103		
Ալավերդի	19	20	32	50	89	83	46	35	36	37	25	16	488	112	376
	33	35	27	30	41	46	52	61	32	40	33	36	61		
Օձուն	21	26	38	58	97	106	61	46	42	43	34	18	590	137	453
	25	33	26	29	47	102	45	55	33	34	38	26	102		

Աղյուսակ 4 Քամու հաշվարկային արագությունը

Բնակավայրի անվանումը	Միջին տարեկան մթնոլորտային ճնշում, (հՊա)	Միջին տարեկան արագությունը, մ/վ	Ուժեղ քամիներով (≥15մ/վ) օրերի քանակը	Հաշվարկային արագությունը (մ/վ), որը հնարավոր է մեկ անգամ «n» տարիների ընթացքում		
				25	50	100
1	2	3	4	5	6	7
Ստեփանավան	860.3	1.7	25	27	29	31

Աղյուսակ 5. Քամի

Բնակավայրի անվանումը	Ամիսներ	Կրկնելիությունը, % ըստ ուղղությունների								Անդրադարձի կրկնելիություն, %	Միջին արագությունը, մ/վ	Ուժգնության առավելագույն արագությունը, մ/վ	Ուժգնության առավելագույն արագությունը, մ/վ	Ուժգնության առավելագույն արագությունը, մ/վ
		Միջին արագությունը, մ/վ												
		Հյուսիս	Հյուսիս-արևելք	Արևելք	Հարավ-արևելք	Հարավ	Հարավ-արևմուտք	Արևմուտք	Հյուսիս-արևմուտք					
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
Ստեփանավան	հունվար	2	3	8	7	7	37	30	6	49	2.8	ՀՎԱրմ	1.6	ՀՎԱրմ	3.9
		2.0	1.3	1.5	2.0	3.0	3.9	2.8	2.2						
	ապրիլ	2	3	11	10	6	25	34	9	45	2.0				
		2.2	1.4	1.6	1.9	2.2	3.1	2.6	2.2						
	հուլիս	2	3	13	10	4	19	39	10	61	1.1				
		1.5	1.1	1.4	1.4	1.4	1.6	1.8	1.5						
	հոկտեմբեր	2	3	12	10	5	24	37	7	59	1.3				
		1.7	1.3	1.4	1.4	1.6	2.2	2.2	2.0						

Աղյուսակ 6. Ձյան ծածկույթ

Բնակավայրի անվանումը	Ձյան ծածկույթը			
	Առավելագույն տասնօրյակային բարձրությունը, սմ	Տարվա մեջ ձնածածկույթով օրերի քանակը	Ձյան մեջ ջրի առավելագույն քանակը, մմ	Գրունտի սառչման առավելագույն խորությունը, սմ
1	2	3	4	5
Ստեփանավան	63	73	147	54
Օձուն	46	53	130	-

Մթնոլորտային օդ

ՀՀ տարածքում օդային ավազանի ֆոնային աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կողմից: Օդային ավազանի աղտոտվածության մոնիթորինգային աշխատանքները կատարվում են ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից:

Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում մթնոլորտային օդի որակի մոնիթորինգը իրականացվում են հիբրիդային դիտացանցի միջոցով: Այն բաղկացած է 15 հիմնական անշարժ՝ ակտիվ նմուշառման և ավտոմատ դիտարկումների դիտակայանից, որտեղ դիտարկումներն իրականացվում են ամենօրյա կտրվածքով և 214 շարժական՝ պասիվ նմուշառման դիտակետից, որտեղ իրականացվում են շաբաթական դիտարկումներ: ՀՀ և միջազգային պահանջների համաձայն անշարժ դիտակայաններում կատարվում է հիմնական աղտոտող նյութերի՝ ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի, փոշու, փոշու մեջ որոշվող մետաղների և գետնամերձ օզոնի (որպես երկրորդային աղտոտիչ) մոնիթորինգ, իսկ շարժական դիտակետերում՝ ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի մոնիթորինգ: Օդի որակի գնահատումը կատարվում է ՀՀ կառավարության 2006 թ. փետրվարի 2-ի N160-Ն որոշմամբ հաստատված ախտոտիչների կոնցենտրացիաների (ՍԹԿ) հետ համեմատությամբ:

Ալավերդի քաղաքում և հարակից համայնքներում կատարվում են փոշու, ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի դիտարկումներ: Գործում է 3 անշարժ դիտակայան և 42 շարժական դիտակետ: Ալավերդի քաղաքի տարբեր հատվածներում, տարբեր օրերին դիտվել են մթնոլորտային օդում փոշու պարունակությունների գերազանցումներ համապատասխան ՍԹԿ-ից: Սռպտեմբեր ամսվա ընթացքում փոշու կոնցենտրացիան գերազանցել է ՍԹԿ-ն՝ 1.1-2.6 անգամ (14 օր): Ծծմբի և ազոտի երկօքսիդների գերազանցումներ համապատասխան ՍԹԿ-ից չեն դիտվել:



Ալավերդի քաղաքի մթնոլորտային օդում փոշու կոնցենտրացիաները



Ալավերդի քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի կոնցենտրացիաները



Ալավերդի քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի կոնցենտրացիաները

Ջրային ռեսուրսներ

ՀՀ տարածքում ջրային ռեսուրսների ֆոնային աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից: ՀՀ կառավարության 2011 թ. հունվարի 27-ի «Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին» N 75-Ն որոշմամբ Հայաստանում մակերևութային ջրերի որակի գնահատման համակարգը ջրի քիմիական որակի յուրաքանչյուր ցուցանիշի համար տարբերակում է կարգավիճակի հինգ դաս՝ «գերազանց» (1-ին դաս), «լավ» (2-րդ դաս), «միջակ» (3-րդ դաս), «անբավարար» (4-րդ դաս) և «վատ» (5-րդ դաս): Ջրի քիմիական որակի ընդհանրական գնահատականը ձևավորվում է վատագույն որակ ցուցաբերող ցուցանիշի դասով: ՀՀ տարածքում ջրային ռեսուրսների կառավարումը կատարվում է ջրավազանային կառավարման 6 տարածքների միջոցով: Մակերևութային ջրերի որակի մոնիթորինգի դիտացանցում ընդգրկված է 6 ջրավազանային կառավարման տարածքի ջրային ռեսուրսների 151 դիտակետ: Տարածաշրջանի ամենախոշոր գետը Դեբեդն է՝ իր մի քանի փոքր վտակներով: Տարածաշրջանի գետերը պատկանում են Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածքին: Հյուսիսային ՋԿՏ-ում ջրի որակի մոնիթորինգն իրականացվում է 22 դիտակետում:

2024 թվականի 4-րդ եռամսյակի ՀՀ հիդրոօդերևութաբանության և շրջակա միջավայրի մանիթորինգի արդյունքների մասին Տեղեկագրին[1] համապատասխան՝ Փամբակ գետի ջրի որակը Խնկոյան գյուղից վերև, Սպիտակ քաղաքից ներքև և Վանաձոր քաղաքից վերև հատվածներում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս). Խնկոյան գյուղից վերև հատվածում՝ պայմանավորված ամոնիում իոնով, Սպիտակ քաղաքից ներքև հատվածում՝ ամոնիում, նիտրատ

[1] http://env.am/storage/files/iv-eramsyak-2024-web.pdf

իոններով, ընդհանուր անօրգանական ազոտով և ընդհանուր լուծված աղերով, Վանաձոր քաղաքից վերև հատվածում՝ ամոնիում, նիտրատ իոններով և ընդհանուր լուծված աղերով: Վանաձոր քաղաքից ներքև հատվածում ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում իոնով: Դեբեդ գետի ջրի որակը Մարց գետի թափման կետից ներքև հատվածում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում իոնով, Այրում քաղաքից վերև և սահմանի մոտ հատվածներում՝ «անբավարար» (4-րդ դաս). Այրում քաղաքից վերև հատվածում՝ պայմանավորված մոլիբդենով և կախութային չոր նյութերով, սահմանի մոտ հատվածում՝ կախութային չոր նյութերով: Զորագետ գետի ջրի որակը Ստեփանավան քաղաքից վերև հատվածում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված մանգանով, գետաբերանի հատվածում ջրի որակը գնահատվել է «լավ» (2-րդ դաս): Տաշիր գետի ջրի որակը Միխայելովկա գյուղից վերև հատվածում գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում իոնով և մանգանով, Սարատովկա գյուղից ներքև հատվածում՝ «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված երկաթով, ալյումինով և կախութային չոր նյութերով: Մարց գետի ջրի որակը գետաբերանի հատվածում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված կախությային չոր նյութերով: Ախթալա գետի ջրի որակը գետաբերանի հատվածում գնահատվել է «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված ցինկով, պղնձով, կադմիումով, մանգանով, կոբալտով, սուլֆատ իոնով և կախութային չոր նյութերով: Գարգառ գետի ջրի որակը ակունքում գնահատվել է «լավ» (2-րդ դաս): Շնող գետի ջրի որակը գետաբերանում գնահատվել է «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված պղնձով, մոլիբդենով, սուլֆատ իոնով և կախութային չոր նյութերով:

Հողային ծածկույթ

Հողը երկրակեղևի մակերեսային փխրուն շերտն է, որը փոփոխվում է մթնոլորտի և օրգանիզմների ազդեցությամբ, լրացվում է օրգանական մնացուկներով: Հողն անընդհատ զարգանում և փոփոխվում է: Բնութագրվում է բերրիությամբ՝ բույսերին մատչելի սննդանյութերով և ջրով ապահովելու

ունակությամբ, որի շնորհիվ այն դառնում է արտադրամիջոց, աշխատանքի առարկա, նյութական բարիքների աղբյուր։

Հողը գյուղատնտ. արտադրության հիմնական միջոցն է. ագրոտեխնիկական, ագրոքիմիական ու բարելավող միջոցառումների կիրառմամբ այն կարելի է դարձնել առավել արդյունավետ, որի ցուցանիշը բույսերի բերքատվությունն է։

Նկար Հողերի բնական տիպերի տարածման քարտեզ

Լոռու մարզն ընդգրկում է Դեբեդ գետի ավազանը ամբողջությամբ և ունի լեռնային ռելիեֆ։ Նրա տարածքում են ձգվում Ջավախքի, Բազումի, Փամբակի, Գուգարաց, Վիրահայոց, Հալաբի լեռնաշղթաները։ Առանձնանում են Փամբակի, Լոռվա գոգավորությունները և Լոռվա ձորը։ Մարզի տարածքում տիրապետում են

անտառային, լեռնատափաստանային, մերձալպյան մարգագետինները: Ալավերդի համայնքի հողային ֆոնդը ներկայացված է ստորև.

- Գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 9992,65 հա,
- Բնակավայրերի հողեր՝ 981,24 հա,
- Արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների՝ 172,33 հա,
- Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյետներ՝ 178,09 հա,
- Հատուկ նշանակության՝ 6,00 հա,
- Հատուկ պահպանվող տարածքների՝ 110,27 հա,
- Անտառային՝ 17967,63 հա,
- Ջրային՝ 105,67 հա,

Համաձայն ՇՄՆ «Հիդրոօդերևութաբանության և մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից հրապարակված տվյալների, հողերի որակի գնահատումն

իրականացվում է ՀՀ առողջապահության նախարարի 2010 թ. հունվարի 25-ի N 01-Ն հրամանի համաձայն: 2023 թ. 4-րդ եռամսյակում հողային ծածկույթի՝ ծանր մետաղներով աղտոտվածության ուսումնասիրման համար դիտարկումներ իրականացվել են միայն Լոռու մարզում: Ուսումնասիրվել են ֆոնային տարածքներ:

Լոռու մարզում ուսումնասիրված հողերում քրոմի պարունակությունը գերազանցում է համապատասխան ՍԹԿ-ն՝ 1.7-25.0 անգամ, վանադիումի պարունակությունը՝ 1.1-2.0 անգամ, նիկելի պարունակությունը՝ 6.0-24.5 անգամ, պղնձի պարունակությունը՝ 58.7-102.7 անգամ, ցինկի պարունակությունը՝ 2.5-13 6 անգամ, արսենի պարունակությունը՝ 3.0-36.5 անգամ և մանգանի պարունակությունը՝ 1.1-2.5 անգամ: Կապարի պարունակությունը չի գերազանցել համապատասխան ՍԹԿ-ն:

Ներկայացվող գործունեության ընթացքում ուղղակի ազդեցություններ տարածքի հողային ռեսուրսների վրա չեն կանխատեսվում, քանի որ նախագծվող

դպրոցը կկառուցվի տարածքի արդեն իսկ հին դպրոցի շենքով յուրացված հողամասում:

Բուսական և կենդանական աշխարհ

Նախատեսվող գործունեության տարածը գտնվում է քաղաքային միջավայրում և հանդիսանում է գործող դպրոցի տարածք, ուստի կենսաբազմազանության վերաբերյալ տեղակատվությունը ավելի նպատակահարմար է ներկայացնել տարածաշրջանի կտրվածքով:

Հայաստանի Հանրապետությունում առանձնացվում է 12 ֆլորիստիկ շրջաններ: Ուսումնասիրվող տեղամասը գտնվում է Երևանի ֆլորիստիկ շրջանում (Հայաստանի Հանրապետության ֆլորիստիկ շրջանները ըստ Կ.Թամանյանի և Գ.Ֆայվուշի, 2009թ) և գրավում է կիսաանապատային լեռնահարթավայրային (500-1000մ.ծ.մ.) լանշաֆտային գոտին, որով և պայմանավորվում է տարածաշրջանի կենսաբազմազանությունը:



Նկար 1 Հայաստանի Հանրապետության ֆլորիստիկ շրջանները ըստ Կ.Թամանյանի և Գ.Ֆայվուշի (2009թ.)

Բուսական աշխարհ. Ըստ Հայաստանի ֆլորիստիկ շրջանների բաժանման (Թախտաջյան, 1954) նախատեսվող գործունեության վայրը գտնվում է Լոռու ֆլորիստիկ շրջանում, ուր բուսականությունն աչքի է ընկնում համակեցությունների բազմազանությամբ, տեսակային հարուստ կազմով: Այստեղ հաշվվում է գրեթե 1650 բուսատեսակ: Լոռու մարզը հարուստ է անտառներով, որի կազմի մեջ մտնող 150 ծառատեսակները մեծամասամբ արժեքավոր են՝ հազվագյուտ ու էնդեմիկ:

Համաձայն Շրջակա միջավայրի նախարարության «ՀՀ կենսաբանական բազմազանության պահպանության, օգտագործման և վերարտադրության ռազմավարություն և գործողությունների պետական ծրագրի»՝ ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակներից Լոռու մարզում հաշվառված է 47 տեսակ,

էնդեմիկների քանակը՝ 7: Համաձայն 2014թ. «Կենսաբանական բազմազանության» ՄԱԿ-ի կոնվենցիայի 5-րդ ազգային զեկույցի՝ Լոռու մարզի սարահարթի մարգագետիններում առկա են ճահճային գոտիներ: Անտառի հիմնական ծառատեսակը հաճարենի արևելյանն (Fagus orientalis Lipsky) է, կաղնի արևելյանը (Quercus macranthers Fisch. et C. A. Mey.), կաղնի վրացականը (Q. iberica Stev.), թխկի վրացականը (Acer ibericum M. Bieb.), լորենի կովկասյանը (Tilia caucasica), բոխի սովորականը (Carpinus betulus L.): Տարածաշրջանի բնական բուսածածկի տիպերից հանդիպում են՝ Բանգի սև (Hyoscyamus niger), Հազարատերևուկ սովորական (Achillea milleffolium), Ոզնագլխիկ սովորական (Echinops ritro), Անանուխ երկարատերև (Mentha longifalia), Եղինջ երկտուն (Urtica dioica), Կատվալեզու եռաբաժան (Bidens tripartita), Ջաղախոտ մեծ, Ջաղախոտ նշտարաձև (Plantago major, Plantagp lanceolata), Ավելուկ գանգուր (Rumex crispus), Երեքնուկ կարմիր Երեքնուկ սողացող (rntblium hybridum, Infolium repens), Ձիաձետ ղաշտային (Equisetum arvense), Սրոհունդ խոցված (Hypericum perforatum), Դանդուռ բանջարանոցային (Portulaca oleraceae), Իշառվայա ղեղատու (Melilotus officinalis), Ճարճատուկ սովորական (Cichorium intybus), Տերեփուկ կապույտ (Centaurea cyanus), Մոշենի թխակապույտ (Rubus caesius), Խատուտիկ դեղատու (Taraxacum officinalis), Մասրենի շնային (Rosa canina), Ուրց Կոչիի (Thymus kotschyanus), Սիբեխ սովորական (Falcaria vulgaris), Ծտապաշար սովորական (Capsella bursa pastoris), Մատիտեղ պարսկական (Polygonum persicaria), Օշինդր դառը (Artemisia absinthinum), Փիփերթ արհամարհված (Malva neglccta), Մատիտեղ թռչնային (Polygonum aviculare) և այլն:

Լեռնաանտառային բուսականությունը հիմնականում տարածված է մարզի լեռնաշղթաների (Վիրահայոց, Բազումի, Փամբակի և Գուգարաց) զառիթափ լանջերին, 600մ-ից մինչև 2000-2100մ բարձրություններում, ուր սովորաբար տարածված են լվացված, հումուսով աղքատ հողերը: Մարզի տափաստաններում տիրապետող բուսատեսակներից են՝ փետրախոտը (Stipa pennata L.), սեզ սողացողը (Elytridia repens L.), դաշտավլուկ մարգագետնայինը (Poa pratensis L.), շյուղախոտ մարգագետնայինը (Festuca pratensis Huds.), կծմախոտը (Bothriochloa

ischaemum L.), չոր լեռնատափաստանների համար ավելի տիպիկ են փշոտ բույսերը, այդ թվում՝ գազ ասեղնայինը (Astragalus picnophyllus Stev.) և զանազան թփերը, մացառները:

Լոռու ֆլորիստական շրջանի սևահող ալրային կարբոնատային հողերի վրա զարգացած է տափաստանային բուսականության բնորոշ բուսատեսակները՝ տարախոտա-հացազգային տեսակների մասնակցությամբ: Դեղաբույսերից տարածում ունեն առյուծագի արտային (Leonurus cardiaca) և դրախտածառ (Cotinus coggygria), ազնվամորի սովորական (Rubus idaeus), բռինչ սովորական (Viburnum opulus), գետնամորի անտառային (Fragaria veska), նռնենի սովորական (Punica granatum), ջրապղպեղ (Polygonum hydropiper), խնկածաղիկ սովորական (Origanum vulgare), կտտկենի սև (Sambukus nigra), մանուշակ դաշտային (Viola arvensis), տատրակ (Tussilago farfara):

ՀՀ Կարմիր գրքում գրանցված են պահպանության կարիք ունեցող ֆլորայի 327 տեսակ, որոնցից են՝ Բանպոտ Բրաունի (Polystichum braunii), Նետախոտ նետախոտանման (Sagittaria sagittifolia L), Պսեֆելուս դեբեդի (Psephellus debedicus), Բոշխ բոհեմական (Carex bohemica Schreb), Թրաշուշան Ջավախքի (Gladiolus dzhavakheticus Eristavi), Ջրաշուշան սպիտակ (Nymphaea alba L.), Մրտավարդ Կովկասյան (Rhododendron caucasicum Pall.), Ճռճռուկ մազոտ (Cerastium capillatum), Հիրիկ Սիբիրյան (Iris sibirica L), Նեղտերև Դոդոնի (Chamaenerion dodonaei), Սոխ Օլթիի (Allium oltense Grossh), Սոխ ժայռի (Allium rupestre Steven), Թաղաղու Ղրիմյան (Asphodeline taurica (Pall.) Kunth) և այլ տեսակները:

Սնկերից՝ Հովանոցասունկ աղջկական (Macrolepiota puellaris), Թիակիկ սովորական (Ithyphallus impudicus), Աստերոֆորա անձրևային (Asterophora lycoperdoides), Ճանճասպան կարմիր (Amanita muscaria), Կոնասունկ փաթիլաոտիկ (Strobilomyces strobilaceus) և այլն:

Տարածքում առկա են ծառեր՝ հիմնականում պտղատու:

Կենդանական աշխարհ. Շնորհիվ իր աշխարհագրական դիրքի և բնության տարրերի բազմազանության, Լոռին առանձնանում է իր կենդանական աշխարհի բազմազանությամբ: Լոռու կենդանական աշխարհի շատ տեսակներ

ընդհանուր են այլ մարզերի համար: Սակայն հանդիպում են նաև կենդանիների այնպիսի տեսակներ, որոնք հատուկ են միայն Լոռու մարզին: Լեռնատափաստանային գոտու կենդանական աշխարհը բնորոշ է հատկապես կրծողներով, որոնցից լան տարածում ունեն՝ դաշտամուկը (Arvicolinae), ճագարամուկը (Dipodidae), կույր մուկը (Mus caecus), համստերը (Cricetinae): Տարածված են նաև կզաքիսը (Saltus martes), գետնասկյուռը (Spermophilus citellus), գորշ գայլը (Canis lupus), աղվեսը (Vulpes): Թռչուններից տարածված են՝ բադը (Anatidae), գորշ կաքավը (Perdix cinerea), շիկահավը (Erithacus rubecula), ճնճղուկը (Passeridae), լորը (Coturnix), կաքավը (Perdix), արտույտ անտառային (Lullula arborea), ծիծեռնակը (Hirundinidae), կաչաղակը (Pica), արծիվը (Aquila), բազեն (Falco) և այլն:

Մերձալպյան և ալպյան գոտիներում հանդիպում են լեռնային տափաստաններին բնորոշ կենդանիներ՝ աղվես, գայլ, նապաստակ (Leporidae), աքիս (Mustella nivalis), դաշտամուկ սովորական (Arvicolinae peculiaris), քարաբնակ կզաքիս (saltus martes): Կաթնասուններից հանդիպում են գայլ, աղվես, քարակզաքիս, ջրային առնետ, թռչուններից՝ կոնչան բադ, սուլող մրտիմն, չքչքան մրտիմն, կարմրագլուխ սուզաբադ, փոփուլավոր սուղաբադ, սևփարփար, եղեգնահավ,լոր, թխակապույտ աղավնի, կտցարներ, տնային ճնճղուկ, մոխրագույն ագռավ: Երկկենցաղներից տարածված է լճագորտը, փոքրասիական գորտը, ձկնատեսակներից՝ լոքոն, կարմրախայտը, կարասը:

ՀՀ Կարմիր գրքում գրանցված Կենդանական աշխարհի ներկայացուցիչներից Լոռու մարզում գրանցված են 54 տեսակ, որից անողնաշարավոր կենդանիներ՝ 7, ողնաշարավոր կենդանիներ՝ 47: Կենդանիների Կարմիր գրքում գրանցված կենդանատեսակներից են՝ Ստեփանավանյան առվակային գնայուկ (Duvalius stepanavanensis Khnzorian), Մթնաշաղային կապտաթիթեռ (Maculinea nausithous), թռչուններից՝ Գառնանգղ (Մորուքավոր անգղ)/Gypaetus barbatus), Գիշանգղ (Neophronpercnopterus), Սպիտակագլուխ անգղ (Gyps fulvus), Փոքր ենթարծիվ (Aquila pomarina), Վայրի հնդկահավ (Ուլար) (Tetraogallus caspius), Մոխրագույն կռունկ (Grus grus), Ներկարար (Coracias

garrulus), Կովկասյան մարեհավ (Tetrao mlokosiewiczi), Տարգալակտուց (Platalea leucordia Linnaeus), կաթնասուններից՝ Շելկովնիկովի կուտորա (Neomys schelkovnikovi Sat.), Գորշ արջ (Ursus arctos Linnaeus), Անտառակատու (Felis silvestris Schreber), Փոքրասիական գետնասկյուռ (Spermophilus xanthoprymnus Bennet) և այլն: Էնդեմիկ տեսակ է հայկական ծղրիդ (Montana armeniaca Rme), սողուններից՝ Դալի մողես (Darevskia dahli), Սպիտակ խխունջ (Gyraulus albus), Փոքրասիական մողես (Parvilacertaparva Boulenger), Սպիտակափոր մողես (Darevskia unisexualis), Հայկական լեռնատափաստանային իժ (Vipera (Pelias) eriwanensi) և այլն: Լոռու սարահարթի լճակներում հանդիպում է մոխրագույն սուզակ, որը քիչ տարածված և կրճատվող տեսակ է:

Ուսումնասիրվող և հարակից տարածքները, մարդու գործունեության արդյունքում, բավականաչափ յուրացված են, բացակայում են ինչպես զգայուն էկոհամակարգերը, այնպես էլ բույսերի և կենդանիների հազվագյուտ և Կարմիր գրքային տեսակները, որի հետ կապված դրանց պահպանության համար հատուկ միջոցառումների նախատեսման անհրաժեշտությունը բացակայում է:

Բնության հատուկ պահպանվող տարածքներ: Լոռու մարզում առկա են ընդհանուր՝ 17576հա մակերեսով 3 արգելավայրեր՝ «Գյուլագարակի», «Մարգահովիտի», «Կովկասյան մրտավարդի»: Առկա է 1 բուսաբանական այգի՝ Վանաձորի բուսաբանական այգին, և 2 դենդրոպարկ՝ Ստեփանավանի «Սոճուտ» դենդրոպարկը և Վանաձորի Ժորա Սարուխանյանի անվան դենդրոպարկը:

Նախատեսվող գործունեության ենթակա և հարակից տարածքում բացակայում են հատուկ պահպանվող տարածքները:



Նկար 2 Հայաստանի Հանրապետության բուսական ծածկույթը

Պատմամշակութային հուշարձանների ցանկը

Ալավերդին աչքի է ընկնում պատմական և ճարտարապետական հուշարձանների առատությամբ:

Համայնքի տարածքը հարուստ է պատմամշակութային արժեք ներկայացնող հուշարձաններով:

Դրանց մեջ են ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության ցանկում ներառված Սանահինի և Հաղպատի վանական համալիրները և Սանահինի պատմական (Քարե) կամուրջը, ինչպես նաև Սուրբ Հովհաննես վանքն՝ Արդվիում, Կուրթանի Սուրբ Աստվածածին եկեղեցին, Ախթալայի եկեղեցին և ամրոցը, Ալավերդու միջնադարյան կամուրջը և այլն:

Ուսումնասիրվող տարածքում կամ տարածքի մոտակայքում պատմամշակութային հուշարձաններ չկան:

Կառուցապատվող տարածքում հնագիտական ուսումնասիրություններ, համաձայն «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենքի (11.11.1998թ.) հոդված 24-ի դրույթների, չեն պահանջվում:

Սոցիալ-տնտեսական տեղեկատվություն

Ալավերդին քաղաք է Լոռու մարզում՝ գտնվում է Դեբեդ գետի երկայնքով, Երևանից մոտ 170 կմ հեռավորության վրա: Քաղաքը հանդիսանում է տարածաշրջանի արդյունաբերական, կրթական և մշակութային կենտրոններից մեկը: Ըստ վերջին պաշտոնական տվյալների՝ բնակչությունը կազմում է շուրջ 10–11 հազար մարդ: Բնակչության հիմնական մասը մշտապես բնակվում է քաղաքի կենտրոնական և հարակից թաղամասերում, իսկ որոշ հատվածներում նկատվում է բնակչության տարիքային ծերացում և արտագաղթ՝ պայմանավորված տնտեսական հնարավորությունների սահմանափակությամբ:

Տեղական տնտեսության կառուցվածքը ձևավորվել է պատմականորեն՝ որպես արդյունաբերական կենտրոն: Քաղաքի գլխավոր տնտեսական ճյուղը երկար տարիներ եղել է պղնձաձուլությունը, սակայն վերջին տասնամյակներին արդյունաբերական գործունեության ծավալները նվազել են: Ներկայում տնտեսության հիմքում են փոքր և միջին ձեռնարկությունները, առևտրային ծառայությունները, շինարարությունը, գյուղատնտեսական արտադրությունը և զբոսաշրջությունը: Ալավերդին ունի զբոսաշրջային ներուժ՝ կապված պատմամշակութային հուշարձանների (Սանահին, Հաղպատ, Կոբայր վանքեր), Միկոյան եղբայրների թանգարանի, ինչպես նաև Դեբեդի կիրճի բնապատկերային արժեքների հետ:

Քաղաքում գործում են նախադպրոցական, միջնակարգ և արտադպրոցական կրթական հաստատություններ, բժշկական կենտրոն, կոմունալ և սոցիալական ծառայություններ: Տրանսպորտային համակարգը

ձևավորված է՝ Ալավերդին միացած է Վանաձորին և Թումանյանին ավտոմայրուղով և երկաթուղային գծով։

Աշխատատեղերի հիմնական մասը զբաղեցված է պետական կառավարման մարմիններում, կրթական հաստատություններում, առևտրային և սպասարկման ոլորտներում։ Աշխատունակ բնակչության որոշ հատված զբաղված է արտագնա աշխատանքով, ինչը ազդում է բնակչության եկամուտների կառուցվածքի վրա։ Տեղական համայնքը համագործակցում է տարբեր միջազգային և զարգացման ծրագրերի հետ՝ ուղղված ենթակառուցվածքների բարելավմանը, բնապահպանական խնդիրների լուծմանը և զբոսաշրջության զարգացմանը։

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նախատեսվող գործունեության ընթացքում շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունները գնահատվում նոր կրթահամալիրի կառուցման գործողությունների ընթացքում, սակայն ազդեությունները կլինեն ժամանակավոր՝ հաշվի առնելով շին. աշխատանքների ժամանակավոր բնույթը և տեղայնացվածությունը:

Կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ նախատեսվող գործունեության իրականցման տարածքներում /ազդեցության գոտում/ լանշաֆտի, բուսական ու կենդանական տեսակների, հողային և ջրային ռեսուրսների վրա վնասակար ազդեցություններ չեն ակնկալվում: Նախատեսված շինարարական աշխատանքների ազդեցությունը բնական լանդշաֆտների վրա կլինի նվազագույն՝ կրելով սահմանափակ և կարճատև բնույթ: Դրանք հնարավոր է կանխել կամ նվազեցնել շինարարական լավ պրակտիկայի արդյունքում:

Նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում ակնկալվում են հետևյալ հիմնական դրական ազդեցությունները.

- ուսումնական և աշխատանքային պայմանների բարելավում,
- կրթահամալիրի առկայություն և հարակից տարածքի բարեկարգում՝ խթանելով նաև առողջ ապրելակերպի զարգացմանը՝ ի հաշվիվ բարեկարգ և ժամանակակից բացօդյա մարզահրապարակների,
- բարեկարգված և կանաչապատված տարածքի կայուն օգտագործում և պահպանություն:

Նախատեսվող գործունեությունը հնարավորություն կտա կրթահամալահիրի ուսուցիչներին, աշակերտներին, մանկապարտեզի սաներին և աշխատակազմին իրենց աշխատանքն ու ուսումնական գործընթացի կազմակերպումն ու իրականացումը անցկացնել առավել անվտանգ, բարեկարգ և հաճելի միջավայրում:

Օդային ավազանի աղտոտում

Ծրագրի ընթացքում հիմնակաում կանխատեսվում են անօրգանական փոշու ժամանակավոր արտանետումներ հողային աշխատանքների ընթացքում: Շինարարության ընթացքում վերը նշված արտանետումները կլինեն տեղայնացված, ենթակա արագ ցրման և ժամանակավոր՝ հաշվի առնելով շինարարական աշխատանքների ժամանակավոր բնույթը: Կանխատեսվում է, որ նշված արտանետումները չեն գերազանցի ՀՀ թույլատրված նորմերը, իսկ մթնոլորտային ավազանում դրանց հնարավոր տարածումը և շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցությունները կկանխարգելվեն և/կամ կնվազեցվեն բնապահպանական կառավարման պլանում ներկայացված միջոցառումների իրականացմամբ, մասնավորապես.

- կապալառուն պարբերաբար կիրականացնի շինարարական հրապարակում աշխատանքային մակերեսների ջրցանման և փոշենստեցման գործողություններ,
- շինարարական մեքենաների երթևեկությունը կկազմակերպվի համապատասխան չափաքանակներով և ծածկող պաստառների առկայությամբ, սահմանափակ արագությամբ (չի գերազանցի 30կմ/ժ արագությունը),
- սորուն նյութերը (ավազ, խիճ, հողային հանույթ և այլն) շինարարական հրապարակում կպահվեն պաստառներով ծածկված վիճակում,
- աշխատանքների ընթացքում պատշաճ մակարդակով կվերահսկվի նաև մեքենա- սարքավորումների տեխնիկական վիճակը:

Օդային ավազանի աղտոտվածության կանխմանն ուղղված միջոցառումների համալիր ցանկը ներկայացված է Բնապահպանական կառավարման պլանում:

Ծրագրի շրջանակում հարակից բնակելի և հասարակական շենքերից ստացված բողոքների դեպքում կիրականացվի նաև օդի աղտոտվածության

գործիքային չափագրումներ, որոնք կհամեմատվեն գործող օրենսդրական նորմերի և ելակետային տվյալների հետ:

Ջրօգտագործում և ջրային համակարգերի վրա ազդեցություն

Ջրօգտագործում

Շինարարության փուլում ջուրն օգտագործվելու է աշխատողների խմելու, տնտեսա-կենցաղային կարիքների, տարածքի ջրցանի, հողի (գրունտի) խոնավացման և անհրաժեշտության դեպքում հրդեհաշիջման համար: Շինարարության համար պահանջվող ժամանակավոր խմելու ջուրը վերցվելու է ներկայումս գործող դպրոցում առկա ջրագծից, որի վրա համապատասխան հորում տեղադրվելու է եռաբաշխիչ և հաշվիչ:

Ջրցանի համար տեխնիկական ջուրը բերվելու է ավտոցիստեռնով՝ պայմանագրային հիմունքներով: Պայմանագիրը կկնքվի Կապալառու կազմակերպության կողմից տեխնիկական ջուր մատակարարող կազմակերպության կամ անձի հետ, որն ունի համապատասխան լիցենզիա: Պայմանագրում կհստակեցվի նաև ջրառի կետը: Տեխնիկական ջուրը լցվելու է տարածքում տեղադրվող 5տ տարողության բաքի մեջ: Ջրի մատակարարման հաճախականությունը կատարվելու է ըստ կարիքի: Տեխնիկական ջուրն ըստ անհրաժեշտության օգտագործվելու է հրդեհամարման, ջրցանի և անիվների լվացման համար:

Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը որոշվում է հետևյալ կերպ՝

Մ1 = S1 x K1 x T, որտեղ՝

S_1 = 4050 մ² (ջրվող տարածքի մակերես)

K_1 = 0.0015 մ³/օր/մ² (1 մ²-ի ջրցանի նորմատիվ)

T = 250 օր (ջրցանի ժամանակահատված, ներառյալ կրկնակի ջրցանը)

Օրական միջին ջրածախսը՝

Մ1 = 4050 x 0.0015 x 250=1518,75 մ³/շին. ժամ. կամ 0,375 մ³/օր:

Շինանձնակազմի կենցաղային և տնտեսական ջրածախսը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

WË.ï. = (n x N + n1 x N1) x T, որտեղ

n = 5 (ԻՏ աշխատողների թիվ)

N = 0.016 մ³/օր/մարդ (ԻՏԱ ջրածախսի նորմատիվ)

n1 = 40 (սպասարկող աշխատողների թիվ)

N1 = 0.025 մ³/օր/մարդ (սպասարկողների ջրածախսի նորմատիվ)

T = 728 (աշխատանքային օրերի թիվ)

Wխ.տ.= (5 x 0.016 + 40 x 0.025) x 728 = 786,24մ³/շին. ժամ. 1,08մ³/օր:

Ընդհանուր ջրի սպառումը շինարարության փուլում՝

2304,99մ³/շին. ժամ:

Կեղտաջրերի հեռացում. շինարարության փուլում աշխատողներն օգտվելու են տեղադրվող սանհանգույցից՝ բիոզուգարանից: Բիոզուգարանի մաքրումը կատարվելու է մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Շահագործման փուլում դպրոցի ջրամատակարարման համակարգը միանալու է գործող ջրագծին, որը սպասարկվում է Վեոլիա ջուր ընկերության կողմից: Իսկ ջրահեռացման համար նախատեսվում է մաքրման կայանի տեղադրում: Նոր կառուցվող դպրոցի ջրամատակարարումը կարող է իրականացվել դպրոցի համար նախատեսված ջրագծից, որը գտնվում է դպրոցի տարածքի հարևանությամբ:

Շահագործման փուլում հրդեհաշիջման համար պահանջվող ջրի ելքը հաշվարկվել է համաձայն «Շենքերի ներքին ջրամատակարարում և ջրահեռացում» ՀՀՇՆ.40-01.01-2014 նորմերի:

Թափոնների առաջացում և կառավարում

Կառուցապատման ժամանակ կատարվելու է 10428.8մ³ ծավալի հողային աշխատանքներ՝ հանույթ, որից ետ լիցք՝ 5617.0մ³: Ավելացած 4811.8մ³ ծավալով

հողային զանգվածն օգտագործվելու է տարածքի հարթեցման համար, քանի որ տարածքում առկա են ռելիեֆի անհարթություններ:

Քանդման արդյունքում առաջանալու են տարբեր տեսակի թափոններ, խիստ մոտարկված հաշվարկներով մոտ 5200մ^3 շինաղբի տեսքով, ինչպես նաև շինարարական տարբեր նյութեր՝ փայտ, պատուհաններ, մետաղական մասեր, քար և այլն: Քանդման արդյունքում առաջացող թափոնները տարանջատվելու են և կուտակվելու են առանձին: Օգտագործման համար պիտանի թափոնները կենթարկվեն երկրորդային օգտագործման, իսկ մնացածը տեսակավորվելու են, հանձնվելու են համապատասխան մասնագիտական կազմակերպություններին կամ տեղափոխվելու են աղբավայր:

Ընդհանուր շինարարական աղբի ծավալը գնահատում է մոտ 5200մ^3: Շինարարական աղբի ամբողջ ծավալի հեռացումն ու տեղադրումը կիրականացվի ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Ալավերդու համայնքապետարանի հետ համաձայնեցված վայրում, որի վերաբերյալ համաձայնությունը նախատեսվում է ձեռք բերել մինչ շինարարական աշխատանքների մեկնարկը:

Շինարարական գործընթացում կստեղծվեն թափոններ հետևյալ փուլերում՝

- Քանդման աշխատանքներ- բետոնային, մետաղական, փայտյա, պլաստիկ նյութեր:
- Հողային աշխատանքներ – հանույթ, կտրում, հարթեցում (հողային զանգվածներ, քարախառն հող):
- Շինարարական աշխատանքներ– բետոնային, մետաղական, փայտյա, պլաստիկ և մեկուսիչ նյութերի մնացորդներ:
- Հարդարման աշխատանքներ – ներկանյութերի, լուծիչների և փաթեթավորման թափոններ:
- Տեխնիկական սպասարկում – յուղեր, ֆիլտրեր, խառնուրդների տարաներ, լցոնանյութեր:

Համաձայն ՀՀ բնապահպանության նախարարի 2006թ. հոկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետությունում գոյացող արտադրության (այդ թվում ընդերքօգտագործման) և սպառման թափոնների ցանկը հաստատելու մասին»

N342-Ն հրամանի, շինարարական աշխատանքների ընթացքում, մասնավորապես՝ նոր կրթահամալիրի շենքի կառուցման և տարածքի բարեկարգման աշխատանքների ընթացքում գնահատվում են ստորև ներկայացվող կազմով թափոնների առաջացում.

Թափոնի անվանում	Ծածկագիր	Վտանգավորության դաս	Քանակ
Կազմակերպությունների կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբ/բացառությամբ խոշոր եզրաչափերի	91200400 01 00 4	IV	մոտ 3 տ
Շենքերի քանդումից առաջացած շինարարական աղբ	91200601 01 00 4	IV	5200 խ.մ
Եռակցման խարամ	31404800 01 99 4	IV	մոտ 0,01 տ
Ջրի պարզեցման շլամներ	94300100 04 00 4	IV	մոտ 0,3 տ
Օգտագործված փաթեթավորման նյութեր (պոլիէթիլեն, ստվարաթուղթ, փայտ)	91200800 01 00 4	IV	մոտ 0,5 տ
Օգտագործված լաքեր, ներկեր և դրանց տարաներ	31404600 01 99 3	III	մոտ 0,02 տ
Օգտագործված քսայուղեր և յուղային ֆիլտրեր	54100200 01 00 3	III	մոտ 0,02 տ
Մետաղյա թափոններ	35100100 01 00 4	IV	մոտ 1,0 տ

Շինարարական աղբի փաստացի քանակի որոշումը և ծավալաթերթով նախատեսված վճարումը հնարավոր է իրականացնել տեղամասի տեխնիկական հսկողություն իրականացնող ինժեների և հեղինակային հսկողություն իրականացնող կազմակերպության համաձայնությամբ:

Շինհրապարակում տեղադրվելու են փակ տարաներ և պոլիէթիլենային պարկեր՝ թափոնների տեսակավորված հավաքման համար: Վտանգավոր թափոնները (օգտագործված յուղեր, ներկանյութեր, լուծիչներ) պետք է պահվեն անջրաթափանց տարաներում, ստվերավորված և փակ տարածքում՝ մակնշմամբ:

Մեխանիզմների և սարքավորումների սպասարկումը իրականացվելու է մասնագիտացված ավտոտեխսպասարկման կայաններում՝ խուսափելով շինարարական տարածքում վտանգավոր թափոնների կուտակումից և պահումից: Կենցաղային թափոնների տեղափոխումն կիրականացվի համայնքի կողմից սահմանված կարգով՝ գործող աղբավայր:

Աղմուկի և թրթռումների ազդեցություն

Աղմուկի համեմատաբար բարձր մակարդակները գնահատվում են շին. աշխատանքների ընթացքում օգտագործվող մեքենա-մեխանիզմների շահագործումից, որոնք նախատեսվում է շահագրծել բացառապես աղմկակլանիչների և խլացուցիչների առկայության դեպքում: Բացի այդ հիմնականում աղմուկ առաջացնող գործողությունները կիրականացվեն միայն օրվա ցերեկային ժամերին, այն է՝ ժամը 9:00- ից մինչև առավելագույնը ժամը 18:00:

Աղմուկի մակարդակի նվազումը ըստ հեռավորության կարելի է հաշվարկել հետևյալ բանաձևով

$$L2=L1–20*\log10(r2/r1)$$

Որտեղ՝

L1-ը ձայնի մակարդակն է աղբյուրից r1 մետր հեռավորության վրա

L2-ը վերջնական ձայնի մակարդակն է աղբյուրից r2 հեռավորության վրա

Աղմուկի ամենաբարձր և հիմանական աղբյուր հանդիսանում է էքսկավատորի աշխատանքը: Որի 1 մետր հեռավորության վրա աղմուկի առավելագույն մակարդակը կազմում է 78 dB:

Կատարվող հաշվարկը աղբյուրից 50 մ հեռավորության համար: Տարածքից 50 մետր հեռավորության վրա է գտնվում բնակելի տուն:

Հաշվարկը կատարվել է վատագույն սցենարաով, ենթադրելով, որ չկա աղմուկը խլացնող որևէ պատնեշ:

$$L2=78–20·\log10(50/1)$$

$$L2=78–20·\log10(50)$$

L2=78–20· 1.69897

L2≈78– 33.9794≈ 44.0206 dB

Էքսկավատորի աշխատանքից 50 մետր հեռավորության վրա աղմուկի մակարդակը կլինի ոչ ավել քան 44.0206 dB

Հաշվարկներով ստացված արդյունքները չեն հակասում «ԱՂՄՈՒԿՆ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐՈՒՄ, ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԵՆՔԵՐՈՒՄ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ» N2-III-11.3 ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ հրամանին:

Աշխատանքները կատարվելու են ցերեկային ժամերին:

Շինարարական գործողությունների ընթացքում թրթռումների ազդեցություններ հարևան ազդակիրների վրա չեն կանխատեսվում:

Շինարարական աշխատանքների ընթացքում կապալառուն պարտավոր է հետևել ՀՀ թրթռումների գործող նորմերը, քանի որ ծրագրի շրջանակում հարակից կառույցների վրա հասցրված ցանկացած ֆիզիկական վնասը պետք է վերացվի կամ փոխհատուցվի կապալառու ընկերության սեփական միջոցների հաշվին:

Աղմուկի և թրթռումների մակարդակների կառավարմանն ուղղված մեղմացնող միջոցառումներն առավել մանրամասը ներկայացված են ԲԿՊ-ում: Ծախսերի արդյունավետության տեսանկյունից նպատակահարմար է համարվել աղմուկի և թրթռումների մակարդակների գործիքային չափագրումներ իրականացնել միայն բողոքների դեպքում:

<u>Ազդեցություն բուսական և կենդանական աշխարհի վրա</u>

Տարածքը կառուցապատված է, և դրա սահմաններում չեն հայտնաբերվել էնդեմիկ կամ Կարմիր գրքում գրանցված բուսական կամ կենդանական տեսակներ:

Նախատեսվող շինության տեղակայման տարածքում առկա են 45 ծառեր, որոնք ենթակա են հատման՝ շինարարական աշխատանքներին խոչընդոտելու

պատճառով: Դրանք ներառում են հետևյալ տեսակները՝ լորենի՝ 2, եղևնի՝ 11, բարդի՝ 4, խնձորենի՝ 8, կակալ՝ 3, հացենի՝ 2 և դամբուլ՝ 15 հատ:

Հատվող ծառերի փոխարեն նախատեսվում է իրականացնել փոխհատուցիչ ծառատունկ՝ տնկելով ընդհանուր թվով 144 ծառ:

Համայնքի կողմից տրված համաձայնությունը ծառահատման վերաբերյալ ներկայացված է հաշվետվության Հավելվածների բաժնում:

Ազդեցություն պատմամշակութային հուշարձանների վրա

Հողային աշխատանքների ընթացքում պատահական գտածոի (շարժական կամ անշարժ) անսպասելի հայտնաբերման դեպքում, համաձայն ՀՀ «Պատմության և մշակութային անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» օրենքի (1998թ.) և ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի ընթացակարգերի, աշխատանքները կդադարեցվեն և շինարար կապալառուն կտեղակացնի Պատվիրատուին, վերջինս էլ՝ լիազոր մարմնին:

Ազդեցություն հողային ռեսուրսների վրա

Շինարարական աշխատանքների ընթացքում կարող են դիտվել հողային ռեսուրսների վրա մի շարք հնարավոր ազդեցություններ, ներառյալ հողաբուսական շերտի խախտումը, էրոզիոն երևույթներ, հողի մասնակի կոմպակցումը շինտեխնիկայի շարժից, ինչպես նաև հողի լվացում կամ աղտոտում՝ շինարարական նյութերի, վառելիքի կամ թափոնների չնախատեսված թափման դեպքում: Նշված ռիսկերի կանխարգելման և մեղմման նպատակով կկիրառվեն հետևյալ բնապահպանական միջոցառումները.

- Հողաբուսական վերին բերրի շերտը նախապես կառանձնացվի, կհավաքվի և կպահեստավորվի նախագծով նախատեսված, քամուց, մթնոլորտային տեղումներից և էրոզիայից պաշտպանված հատվածներում՝ հետագա ռեկուլտիվացիայի համար:

- Կկիրառվեն ժամանակավոր շրջափակումներ, քամուց և ջրային էրոզիայից պաշտպանող միջոցներ՝ ներառյալ ջրահոսքերի ուղղորդում, ժամանակավոր ջրամեկուսացում և մակերեսային հոսքերի կառավարում:
- Շինհրապարակի ներսում տեխնիկայի շարժը կիրականացվի միայն սահմանված երթուղիներով՝ նվազեցնելով հողի կոմպակցումը:
- Կկազմակերպվի շինարարական տարածքի կանոնավոր մաքրում և հսկողություն՝ հողի աղտոտումը կանխելու համար, իսկ վառելիքի և քսայուղերի հետ աշխատանքները կիրականացվեն միայն համապատասխան կանխարգելիչ միջոցներով ապահովված հատվածներում:
- Շինարարության ավարտին կկատարվի տարածքի ռեկուլտիվացիա՝ հողաբուսական շերտի վերադարձմամբ և բնական բուսածածկի վերականգնմամբ:

<u>Աշխատանքի անվտանգություն</u>

Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում մեծ ուշադրություն է դարձվելու աշխատանքային անվտանգության ապահովման հարցերին, որի համար նախատեսված են մի շարք միջոցառումներ հնարավոր ազդեցությունները և անհարմարությունները բացառելու կամ մեղմացնելու նպատակով:

Շինհրապարակում առողջության և աշխատանքային անվտանգությանն ուղղված կանոնները/միջոցառումները կիրականացվեն կապալառուի կողմից՝ համաձայն ԲԿՊ-ում նկարագրված ընթացակարգի, որոնք համալիր ներկայացված են ԲԿՊ-ի «Առողջության և աշխատանքի անվտանգության պլան», ինչպես նաև «Արտակարգ իրավիճակների արձագանքման պլան» ենթաբաժիններում:

Շինարարական աշխատանքների ընթացքում խստորեն կպահպանվեն անվտանգության և հակահրդեհային միջոցառումները, մասնավորապես.

- Նախքան աշխատանքի սկսելը կկատարվի շինհրապարակի ժամանակավոր ցանկապատում և կտեղադրվեն մուտքը արգելող ցուցափեղկեր/նշաններ։
- Շինարարությունում շահագործվող կռունկը պետք է անցած լինի անվտանգության տեխնիկայի փորձաքննության և գրանցված լինի, «Տեխնիկայի անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի ռեգիստրում։
- Հակահրդեհային անվտանգությունը շինհրապարակում, աշխատատեղում և աշխատանքի տեղամասերում անհրաժեշտ է ապահովել համապատասխան «Հակահրդեհային անվտանգության կանոններ» պահանջներին համապատասխան, ապահովել կրակմարիչի առկայությունը և հրդեհային անվտանգության վերաբերյալ պաստառներև այլն։
- Մինչև աշխատանքների սկսելը աշխատողներին պետք է հրահանգավորել անվտանգության տեխնիկայի մասին։ Բանվորների աշխատանքների պաշտպանությունը պետք է ապահովվի վարչակազմի կողմից, նրանց անհատական պաշտպանական միջոցներ տրամադրմամբ (հատուկ արտահագուստ, կոշիկ, սաղավարտ և այլն)։
- Տանիքի և բարձրության վրա աշխատանքերի իրականացման ժամանակ, աշխատանքներն անհրաժեշտ է կատարել անվտանգության գոտիների օգտագործմամբ, որոնք պետք է ամրացվեն կոնստրուկտիվ ճշտված և հուսալի էլեմենտից։
- Եռակցման աշխատանքներ իրականացնելիս անհրաժեշտ է հետևել, որպեսզի էլեկտրա և գազաեռակցված սարքերը գտնվեն ճանապարհներից և անցումներից մի կողմ և էլեկտրաեռացման սարքը և եռակցվող նյութը լինեն հողանցված։
- Խտացված գազով բալոնները պետք է տեղափոխել միայն հատուկ պատգարակի միջոցով։ Բալոնին չի թույլատրվում մոտենալ յուղոտված հագուստով, արգելվում է նաև բալոնների մոտակայքում ծխելը։
- Արգելվում է տանիքում աշխատանքներն իրականացնելը, մշուշի, ամպրոպի և քամու 6 բալ արագությամբ գերազանցման դեպքում։

- Անվտանգության անհատական մոտեցումներ կապված կռունկի գործողության գոտում կատարվելիք շին-մոնտաժային աշխատանքների հետ (օրինակ՝ բեռի տեղափոխումը գոյություն ունեցող շենքերի տանիքի վրայով):

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Շրջակա միջավայրի պահպանություն և մեղմացնող միջոցառումները

Ծրագրի համապատասխանությունը ՀՀ օրենսդրական պահանջներին և նորմերին նախատեսվում է ապահովել բնապահպանական կառավարման պլանի (ԲԿՊ) միջոցով: ԲԿՊ-ում պարունակում է Ծրագրի բոլոր փուլերի ընթացքում (նախագծում, շինարարություն և շահագործում) հնարավոր անցանկալի բացասական ազդեցությունները կանխելու և մեղմացնելու միջոցառումներն, ինչպես նաև մոնիտորինգի գործողությունները՝ ստուգելու համար շինարարական աշխատանքների իրականացման ընթացքի համապատասխանությունը պլանավորված մեղմացնող միջոցառումներին:

ԲԿՊ-ն որպես անբաժանելի մաս կցվելու է հիմնական շինարար կապալառուի մրցութային և պայմանագրային փաստաթղթերին: Հիմնական կապալառուն պատասխանատու է լինելու ԲԿՊ-ի իրականացման համար և իր հերթին համապատասխան պայմանագրային պարտավորություններ է նախատեսելու ենթակապալառուի հետ իր պայմանագրերում:

ԱՇԽԱՏԱՆՔՆԵ	ՊԱՐԱՄԵՏՐԵՐ	ՄԵՂՄԱՑՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՍՏՈՒԳԱԹԵՐԹԻԿ
Ընդհանուր դրույթներ	Նախազգուշացումներ և աշխատողների անվտանգություն	▪ Շինարարության և շրջակա միջավայրի անվտանգությունը վերահսկող մարմինները և համայնքը պետք է նախազգուշացված լինեն սպասվող գործընթացների վերաբերյալ ▪ Աշխատողների անհատական պաշտպանության միջոցները պետք է համապատասխանեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափանիշներին (մշտապես սաղավարտների կիրառում, անհրաժեշտության դեպքում դիմակներ և պաշտպանիչ ակնոցներ, պաշտպանիչ հագուստ և կոշիկներ) ▪ Շինհրապարակում տեղադրվող համապատասխան տեղեկատվական վահանակները
Շինարարական աշխատանքներ	Օդի որակ	▪ կառուցապատման ենթակա տարածքը ցանկապատել ▪ շինությունների ծածկում անթափանց թաղանթով, համապատասխան բարձրության ▪ շինարարական աշխատանքների /Փոշի առաջացման աշխատանքներ/ ընթացքում անհրաժեշտ է իրականացնել ջրցան, ▪ պարբերաար ստուգել շինարարական տեխնիկայի և Փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգաորում: ▪ շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղաՓոխումը պետք է իրականցվի Փակ ծածկով մեքենաներով. ▪ իրականացնել շինտեխնիկայի անվադողերի լվացում շինհրապարակից դուրս գալուց առաջ
	Աղմուկ	▪ Աղմկահարույց աշխատանքներն հնարավորինս իրականացնել օրվա ցերեկային ժամերին: ▪ շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին, ▪ պարբերաար ստուգել և կարգաերել տեխնիկական միջոցների և ավտոտրանսպորտի շարժիչները, բացառել անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործումը ▪ շինարարական տեխնիկական միջոցների ընտրության ժամանակ հատուկ ուշադրություն դարձնել դրանց աղմուկի մակարդակին: ▪ Բոլոր մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով:
	Թափոնների կառավարում	▪ Շինարարական աղբը պետք է պատշաճ կերպով հավաքվի և հեռացվի արտոնագիր ունեցող աղբահավաքների կողմից ▪ Բացառել տարածքում թափոնների բաց այրումը ▪ Անհրաժեշտ է նշանակել արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շին. հրապարակում;

	Կեղտաջրերի հեռացում	▪ Շինարարական անձնակազմը կօգտվի նախատեսվող բիոզուգարաններից, կոյուղաջրերի հեռացումը շինհրապարակից պետք է իրականացվի ընդհանուր կոյուղու համակարգի միջոցով, ▪ Շինարարական տրանսպորտային միջոցները և սարքավորումները պետք է լվացվեն շինհրապարակից դուրս , համայնքում գործող մասնագիտացված կետերում:
	Կենսաբազմազանության պահպանում	▪ Խուսափել ավելորդ ծառահատումներից և բուսածածկի ոչնչացումից: ▪ Շինարարության ընթացքում պարբերաբար դիտարկել տարածքը՝ համոզվելու համար, որ նոր արժեքավոր տեսակներ չեն հայտնվել: ▪ Նոր տեսակների հայտնաբերման դեպքում նախաձեռնել համապատասխան միջոցառումներ՝ ▪ Հայտնաբերման արձանագրում և փաստաթղթավորում ▪ Կազմել արտակարգ արձանագրություն, որտեղ նշվում են հայտնաբերման վայրն ու պայմանները, հնարավոր վտանգները և ուղեկցվում է լուսանկարներով: ▪ Հայտնաբերման պահին, եթե իրավիճակը կարող է վտանգել հայտնաբերված տեսակին կամ տարածքի կենսաբազմազանությանը, տվյալ հատվածում ժամանակավոր դադարեցնել բոլոր աշխատանքները, մինչև կանցկացվի գնահատում: ▪ Ներգրավել մասնագիտացված էկոլոգ կամ կենսաբազմազանության փորձագետ: ▪ Տեղեկատվության փոխանցում լիազորված մարմնին: ▪ Աշխատանքների հարմարեցում կամ միջոցառումների փոփոխում:

Մոնիտորինգ

ՀՏՋՀ-ի կողմից կանոնավոր մոնիտորինգ է իրականացվելու ԲԿՊ-ում նախանշված մեղմացնող միջոցառումների կատարումը և դրանց արդյունավետությունը ստուգելու նպատակով: ՀՏՋՀ-ի բնապահպանության երաշխիքների մասնագետները պարբերաբար իրականացնելու են մոնիտորինգի դաշտային ստուգայցեր կրթահամալիրի շինարարական տեղամաս: Մոնիտորինգային արդյունքները գրանցվելու են Ծրագրի շրջանակում մշակված մոնիտորինգի ստուգաթերթիկում:

Տեխնիկական վերահսկողության շրջանակներում կիրականացվի ամենօրյա հսկողություն, որը կներառի նաև բնապահպանական, առողջության և աշխատանքային անվտանգության հարցերը: և նկատված հայտաբերված անհամապատասխանությունների վերաբերյալ ժամանակին կտեղեկացվի ՀՏՋՀ-ին:

Ծախսերի արդյունավետության տեսանկյունից նպատակահարմար է համարվել փոշու, աղմուկի և թրթռումների մակարդակների չափագրումներն իրականացնել ազդակիր կողմերի համապատասխան բողոքների դեպքերում:

ՀՏՋՀ-ի կողմից նախատեսվող գործունեության իրականացման ողջ ընթացքում ներդրվելու է բողոքների անդրադարձման մեխանիզմ (ԲԱՄ): Շահառուների հետ կապի և բողոքների լուծման մեխանիզմների վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է ՀՏՋՀ-ի պաշտոնական կայքում (www.atdf.am):

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՊԼԱՆ

Գործողություն	Նվազեցնող միջոցառումներ	Որտեղ իրականացնել	Ինչպես իրականացնել	Ժամանակամիջոց	Կատարող
Շինանյութերի և թափոնների տեղափոխում Շինարարական տեխնիկայի տեղաշարժ	- Մեքենաների և տեխնիկայի համապատասխան տեխնիկական վիճակի ապահովում - Բեռնատարերի բեռնվածության սահմանափակում հերթականության ապահովմամբ - Տեղափոխումների ժամանակացույցի և երթուղիների պահպանում	Շինհրապարակ Շինանյութերի և աղբի տեղափոխման երթուղիներ	Շինհրապարակ տանող ճանապարհների ստուգում	Աշխատանքային ժամերին և դրանցից դուրս անսպասելի ստուգումների իրականացում	Կապալառու
Շինարարական տեխնիկայի շահագործում տեղամասում	Մեքենաների և տեխնիկայի լվացումը պետք է կատարվի շինհրապարակից դուրս , համայնքում գործող մասնագիտացված կետերում - Տեխնիկական միջոցների վառելիքի լիցքավորումը և յուղումը պետք է իրականացվի շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում	Մասնագիտացված ընկերություն	Գործընթացների գործունեության ստուգում	Մեխանիզմների շահագործման ընթացքում	Կապալառու
Հողային աշխատանքներ	- Հանված հողերը հեռացվում են համայնքի կողմից հատկացված վայր	Շինհրապարակ	Գործընթացների ստուգում	Հողային աշխատանքների	Կապալառու

				ընթացքում	
Կենցաղային աղբի առաջացում	- Աղբամանների տեղադրում շինարարական հրապարակում - համայնքի թույլտվություն թափոնի մշտական տեղակայման վերաբերյալ	Շինհրապարակ	Արտաքին զննում	Շինարարության ողջ ընթացքում	Կապալառու, քաղաքապե-տարանի վերահսկողու-թյուն
Աշխատանքի անվտանգություն	- Անձնակազմի ապահովում արտահագուստով և անձնական պաշտպանիչ միջոցներով - Շինարարության կանոնների և անձնական պաշտպանության նորմերի խստիվ պահպանություն	Շինհրապարակ	Ստուգման գործընթացներ	Աշխատանքնե րի ողջ ընթացքում	Կապալա ռու, պատվիրատու
Կենսաբազմազանությո ւն	- Շինարարության ընթացքում տարածքի պարբերական դիտարկումներ ՝ համոզվելու համար, որ նոր արժեքավոր տեսակներ չեն հայտնվել: - Անսպասելի հայտնված արժեքավոր տեսակների կամ բնապահպանական ռիսկերի դեպքում ապահովել համապատասխան մասնագիտական արձագանք՝ խորհրդատվություն, գործողությունների դադարեցում կամ հարմարեցում:	Շինհրապարակ	Ստուգման գործընթացներ	Աշխատանքնե րի ողջ ընթացքում	Կապալա ռու, պատվիրատու

Տարածքի Կանաչապատում, բարեկարգում Վտանգավոր նյութերի և թաՓոնների կառավարում	Տեղանքին բնորոշ ծառաթփային բուսականության թփերի և այլ բուսականության նորմալ աճ Վառելիքի, յուղերի և այլ թունավոր նյութերի արտահոսքեր	Կառուցապատվող հողամաս Շինհրապարակ	Կանաչապատման բոլոր տեղամասերը Արտաքին զննում Արտաքին զննում	Շինարարության Ավարտին Շինարարության ընթացքում	Կապալառու, Կապալառու,

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- ՀՀՇՆ 22-01-2024 «Շինարարական Կլիմայաբանություն» ՀՀ շինարարական նորմերը հաստատելու և ՀՀ քաղաքաշինության նախարարի 2011թ. սեպտեմբերի 26-ի N167-Ն հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին:
- Временное методическое пособие по расчету выбросов от неорганизованныхисточников в промышленности строительных материалов, МИНПРОМСТРОЙ СССР1984, Москва.
- ԱԴԲ 2015: Բնապահպանական գնահատման և ուսումնասիրության շրջանակ:
- ՀՀ կառավարության որոշում N160-Ն, 2 փետրվար, 2006թ: Բնակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենտրացիաների-ՍԹԿ) նորմատիվները հաստատելու մասին:
- Տեղեկագիր ՀՀ հիդրոօթերևութաբանության և շրջակա միջավայրի մոնիթորինգի արդյունքների մասին: Երևան: 2024թ 1-ին եռամսյակ: http://armmonitoring.am/public/admin/ckfinder/userfiles/files/texekanq/eramsjak/I-2024.pdf
- ՀՀ կառավարության որոշում 596-Ն, 2015: ՀՀ-ում «Կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին»:
- ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի N-1243- Ն հրաման, 2015թ: «Սեյսմիկ պաշտպանության բնագավառի հատուկ և կարևոր նշանակության օբյեկտները սահմանելու մասին»:
- ՀՀ Օրենք Սեյսմիկ պաշտպանության մասին, 2002 թ:
- ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի N 102-Ն հրաման, 2020թ: ՀՀՇՆ 20.04-2020 «Երկրաշարժադիմացկուն շինարարության նախագծման նորմեր» շինարարական նորմերը հաստատելու և ՀՀ քաղաքաշինության նախարարի 2006 թվականի փետրվարի 3-ի N 24-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին:

Հավելված 1. Հողամասի կոորդինատներ



	X	Y	
1	4550793,55	8472098,03	
2	4550733,80	8472202,07	119,97
3	4550694,76	8472179,68	45,00
4	4550675,27	8472168,46	22,49
5	4550647,67	8472152,53	31,87
6	4550641,34	8472149,32	7,10
7	4550638,93	8472147,71	2,90
8	4550653,95	8472111,47	39,23
9	4550668,66	8472081,17	33,69
10	4550672,62	8472077,17	5,63
11	4550693,00	8472086,71	22,51
12	4550698,93	8472072,82	15,09
13	4550694,37	8472070,76	5,00
14	4550719,49	8472020,34	56,33
15	4550729,49	8472025,49	11,25
16	4550751,09	8471984,56	46,28
17	4550751,33	8471984,11	0,51
18	4550766,84	8471988,57	16,13
19	4550773,73	8471990,46	7,15
20	4550762,89	8472019,94	31,41
21	4550776,55	8472024,58	14,43
22	4550768,68	8472046,59	23,38
23	4550757,67	8472077,42	32,73
1	4550793,55	8472098,03	41,39

Հավելված 2. Հանրային քննարկման արձանագրություն, մասնակիցների ցանկ և նկարներ



ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

Ալավերդի համայնքի Սանահին գյուղի դպրոց-մանկապարտեզի շենքի կառուցման հանրային լսում

2025 թվականի փետրվարի 20, ժամը՝ 14:30,
ՀՀ, Լոռու մարզ, ք. Ալավերդի

Հանրային լսումը վարում էր Ալավերդի համայնքի ղեկավար Դավիթ Ղումաշյանը:

Հանրային լսմանը ներկա էին՝ Ալավերդի համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Հարություն Ձավարյանը, Սանահին բնակավայրի վարչական ղեկավար Արծրուն Սիմոնյանը, համայնքապետարանի քաղաքաշինության և հողաշինության բաժնի առաջատար մասնագետներ Տիգրան Թամազյանը, Գարիկ Խալաթյանը, Տարածքային զարգացման հիմանդրամի, նախագծող կազմակերպության ներկայացուցիչները, բնակիչներ:

1. **Հանրային լսման մասնակիցները քննարկեցին Սանահին գյուղում նոր կառուցվող դպրոցի, մակապարտեզի վերաբերյալ հարցեր**

1) Ալավերդի համայնքի ղեկավար Դավիթ Ղումաշյանը ներկայացրեց հանրային լսման անցկացման նպատակը, նախատեսվող շինարարաության մեկնարկի, ժամկետների վերաբերյալ տեղեկատվություն:
Ընդգծվեց, որ դպրոցի շենքը նախատեսված է թվով 200 աշակերտի և մանկապարտեզի շենքը՝ 80 երեխայի համար:
Նշեց, որ շինարարական աշխատանքների կատարման ժամկետը շուրջ 1.5 տարի է:
Առաջարկեց շինարարական աշխատանքներում ներգրավել տեղացիներին, որը կնպաստի վերջիններիս աշխատանքով ապահովելուն և շինարարներին կազատի աշխատեղերի համար կեցության վայրերի ապահովման խնդրից:

2) Տարածքային զարգացման հիմնադրամի ներկայացուցիչներից Մերի Աբրահամյանը ներկայացրեց ծրագրի վերաբերյալ մի շարք հարցեր, ընդգծեց, որ նախատեսվում է իրականացնել 2 հանրային լսում, որոնցից առաջինի ընթացքում ակնկալվում էր լսել տարբեր առաջարկություններ, դիտողություններ և լրամշակումներ անելուց հետո իրավիրել 2-րդ լսումը:

1



Ընդգծեց, որ շինարարը պարտավոր է շինարարությունը կատարել ՀՀ-ում գործող նորմատիվ օրենսդրության հիման վրա:
Տարածքային զարգացման հիանդրամը հետևողական է լինելու, խիստ վերահսկելու է և պարբերաբար իրականացնելու է այցեր:

3) Նախագծող կազմակերպության ներկայացուցիչները, ավելի մանրամասն ներկայացրեցին կատարված աշխատանքները, ընդգծեցին, որ կառուցվող օբյեկտները լինելու են ժամանակակից լուծումներով, հագեցած են լինելու բոլոր հարմարություններով՝ ջուր, հոսանք, արևային կայան (ջեռուցումը նախատեսվում է իրականացնել հոսանքով):
Ընդգծվեց, որ դպրոցը և մանկապարտեզը հագեցած են լինելու սպորտդահլիճով, մանկական խաղահրապարակներով, զրուցատաղավարներով, տարածքում լինելու է կանաչապատ գոտի , ծառեր:
Նշվեց, որ նախատեսվում է շուրջ 1 միլիարդ 600 մլն. ՀՀ դրամ ներդրում:

2. **Հանրային լսման արդյունքում որոշվեց**.
1) Հաջորդ հանրային լսումն իրականացնել Սանահին գյուղում:
2) Ձեռնամուխ լինել Սանահին գյուղում ժամանակավոր զբաղվածության ապահովմանը՝ տեղացիներին շինարարական աշխատանքներում ընդգրկելով, որը փոխշահավետ կլինի և շինարարի և գյուղացիների համար:
3) Կոյուղատարի խնդրահարույց հարցին տալ լուծում՝ սեպտիկ հորի և մաքրման կայանի ներդրմամբ, ինչը հնարավորություն կտա ապահովել նաև ոռոգման համար օգտագործելի ջուր:

Ալավերդի համայնքի ղեկավար Դավիթ Ղումաշյան

2



Մասնակիցների ցանկ
«ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի Սանահին բնակավայրի կրթահամալիրի կառուցում» նախատեսվող գործունեության վերաբերյալ 2024թ-ի փետրվարի 20-ին ժամը 14:00-ին ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքապետարանում կազմակերպված հանրային ծանուցման և քննարկումների
(1-ին փուլի հանրային ծանուցում և քննարկումներ)

N	Ազգանուն/անուն	Կազմակերպություն /պաշտոն	Հեռախոսահամար	Ստորագրություն
1	[illegible]	[illegible]	094380094	
2	[illegible]	[illegible] I-ի գլխավոր	099[illegible]	
3	[illegible]	[illegible]	096-035[illegible]	
4	[illegible]	ROAD Construct ՍՊԸ [illegible]	093676627	
5	[illegible]	[illegible]	098-12-76-11	
6	[illegible]	[illegible]	099205541	
7	[illegible]	[illegible]	033647224	
8	[illegible]	[illegible]	093284946	
[illegible]	[illegible]	[illegible]	091191139	
[illegible]	[illegible]	[illegible]	091592724	



12	[illegible]	[illegible]	091142470	
13	[illegible]	[illegible]	077 37 31 65	
14	[illegible]	[illegible]	096777038	
15				
6				
7				

Հավելված 3. Ավագանու՝ գործունեությանը նախնական համաձայնություն տալու մասին որոշման պատճեն



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

25 փետրվարի 2025 թվական, N 23-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԱՆԱՀԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ՆՈՐ ԴՊՐՈՑ ԿԱՌՈՒՑԵԼՈՒՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով՝

համայնքի ավագանին *որոշում է*.

1. Տալ նախնական համաձայնություն Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի Սանահին բնակավայրում նոր դպրոց կառուցելուն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրան պահից:

Որոշումն ընդունվեց.

			ԿՈՂՄ	ԴԵՄ	ՁԵՌՆՊԱՀ
1.	ԴԱՎԻԹ	ՂՈՒՄՄԱՇՅԱՆ			
2.	ԼՈՐԱ	ՍԱՐԳՍՅԱՆ			
3.	ՀԱՄԼԵՏ	ՂՈՒԼՅԱՆ			
4.	ԱՐՄԻՆԵ	ԵՐԻՑՅԱՆ			
5.	ՄԿՐՏԻՉ	ՄԱՐԳԱՐՅԱՆ			
6.	ՀԱՐՈՒԹՅՈՒՆ	ՁԱՎԱՐՅԱՆ			
7.	ՖԼՈՐԱ	ԹԱԹՈՒԽԱՇՎԻԼԻ			
8.	ԴԱՎԻԹ	ՍԱՐԳՍՅԱՆ			
9.	ՀՐԱՆՏ	ՀԱԽՎԵՐԴՅԱՆ			



10.	ԱՆԱՀԻՏ	ՍՄԲԱՏՅԱՆ			
11.	ԱՐՏԱԿ	ԳԵՎՈՐԳՅԱՆ			
12.	ԱՐԵՆ	ԴԱԼԼԱՔՅԱՆ			
13.	ՀԱՅԿ	ՀՈՎԱԿԻՄՅԱՆ			
14.	ՍԻՄՈՆ	ՋԱԽԱՐՈՎ			
15.	ՆԱՐԻՆԵ	ԹՈՐՈՍՅԱՆ			
16.	ՍԱՄՎԵԼ	ԷԼԲԱԿՅԱՆ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՂՈՒՄՄԱՇՅԱՆ

2025թ., փետրվարի 25,
Լոռու մարզ, ք. Ալավերդի

Հավելված 4. Հանրային քննարկման թերթի հայտարարությունը



ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման եւ փորձաքննության մասին» ՀՀ օրենքով (21.06.2014թ. ՀՕ-110-Ն), «ՀՀ Կառավարության 2014թգ նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության 28 դեկտեմբերի 2023թգ N 2343-Ն որոշման հավելվածի համաձայն 2025թ. փետրվարի 21-ին, ժամը՝ 16:00-ին, ՀՀ Կոտայքի մարզի, Գառնի համայնքի, Գեղադիր բնակավայրի վարչական շենքում իրականացվելու է հանրային քննարկում «ԿԱՊԻՏԱԼ ԴԻՋԱՅՆ» ՍՊԸ կողմից նախատեսվող Կոտայքի մարզի, Գառնի համայնքի, Գեղադիր բնակավայրի կրթահամալիրի կառուցման աշխատանքների վերաբերյալ: Փաստաթղթերին կարելի է ծանոթանալ ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության պաշտոնական կայքում (www.mnp.am): Շահագրգիռ հանրությունը, գրավոր կամ էլեկտրոնային եղանակով ներկայացված առաջարկությունները, դիտողությունները եւ կարծիքները կարող է ներկայացնել օրենքով սահմանված կարգով, սույն ծանուցումից հետո՝ 20 աշխատանքային օրվա ընթացքում:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման եւ փորձաքննության մասին» ՀՀ օրենքով (21.06.2014թ. ՀՕ-110-Ն), «ՀՀ Կառավարության 2014թգ նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության 28 դեկտեմբերի 2023թգ N 2343-Ն որոշման հավելվածի համաձայն 2025թ. փետրվարի 20-ին, ժամը՝ 14:00-ին, ՀՀ Լոռու մարզի, Ալավերդի համայնքապետարանում իրականացվելու է հանրային քննարկում «ԿԱՊԻՏԱԼ ԴԻՋԱՅՆ» ՍՊԸ կողմից նախատեսվող Լոռու մարզի, Ալավերդի համայնքի, Սանահինի բնակավայրի կրթահամալիրի կառուցման աշխատանքների վերաբերյալ: Փաստաթղթերին կարելի է ծանոթանալ ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության պաշտոնական կայքում (www.mnp.am): Շահագրգիռ հանրությունը, գրավոր կամ էլեկտրոնային եղանակով ներկայացված առաջարկությունները, դիտողությունները եւ կարծիքները կարող է ներկայացնել օրենքով սահմանված կարգով, սույն ծանուցումից հետո՝ 20 աշխատանքային օրվա ընթացքում:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Համաձայն **«Շրջակա միջավայրի վրա ազդեցության** գնահատման եւ փորձաքննության **մասին» ՀՀ օրենքով եւ ՀՀ կառավարության** 19.11.2015թ-ի 1325-Ն որոշմամբ սահմանված կարգի **2025 թվականի փետրվարի 20-ին, ժամը** 11:00-ին Արմավիրի մարզի Մեծամոր **համայնքի Նոր Արտագերս բնակավայրի վարչական** մասնաշենքում տեղի կունենա **«ԼԻԼԱՆԱՐՄ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված «ՀՀ Արմավիրի մարզի, Նոր Արտագերսի կրթահամալիրի կառուցման»** վերաբերյալ առաջին հանրային լսում:

Շահագրգիռ հանրության կողմից առաջարկությունները, դիտողությունները եւ կարծիքները կարող են ներկայացվել բանավոր հանրային քննարկման ընթացքում, կամ գրավոր՝ ծանուցումից հետո 20 աշխատանքային օրվա ընթացքում:

Փաստաթղթերին կարելի է ծանոթանալ զանգահարելով 099-13-09-90, կամ գրավոր՝ lilenarm@mail.ru էլեկտրոնային հասցեի միջոցով:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Իջեւանի համայնքապետարանը հայտարարում է քաղաքաշինական նպատակներով առանձնացված հողամասերի դյուրակաս աճուրդային վաճառք

Լոտ-1 ք. Իջեւան, Ապլանյան փողոց, թիվ 184/1 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, բնակավայրերի բնակելի կառուցապատման, 400.0 քմ մակերեսով, 1քմ-ի մնկնարկային գինը 2890 ՀՀ դրամ /ծանկագիր 11-001-0259-0021/, մասնակցության վճարը կազմում է 25000 /քսանհինգ հազար/ ՀՀ դրամ

Լոտ-2 գ. Ենոքավան, 2-րդ փողոց, թիվ7/6 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, բնակավայրերի բնակելի կառուցապատման, 115.4 քմ մակե-

Հավելված 8. Շինարարական աշխատանքների ժամանակացույցը



Հավելված 10. Շինարարական աշխատանքների կազմակերպման հատակագիծ



Հավելված 11. Ծառահատման թույլտվություն



«ԿԱՊԻՏԱԼ ԴԻԶԱՅՆ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

"CAPITAL DESIGN"
REPUBLIC OF ARMENIA
LIMITED
LIABILITY
COMPANY

«ՌՈՈՒԴԿՈՆՍՏՐԱԿՏ» ՍՊԸ տնօրեն՝
Ա.Սահակյանին
Կապիտալ Դիզայն ՍՊԸ
Տնօրեն՝ Է.Դավթյանից

Հարգելի պարոն Սահակյան

Հայտնում ենք Ձեզ, որ « ՌՈՈՒԴԿՈՆՍՏՐԱԿՏ » ՍՊԸ-ի և Կապիտալ Դիզայն ՍՊ Ընկերության միջև կնքված պայմանագրի շրջանակներում իրականացվում է ՀՀ Լոռու մարզի Սանահին բնակավայրում կրթահամալիրի կառուցման տեղակայման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման ծառայություններ/-ը:

Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների ընթացքում անհրաժեշտություն է առաջացել իրականացնել թվով 45 ծառերի/տրենիի-2 հատ, եղևնի 11 հատ, բարդի 4 հատ, խնձորենի 8 հատ, կակալ 3 հատ, հացենի 2 հատ, դամբուղ 15 հատ/ կտրման և արմատահանման աշխատանքներ:

Ուստի խնդրում եմ Ձեր միջնորդությունը, իրականացնել նշված աշխատանքները, քանի որ դրա անհրաժեշտ է հիմնային աշխատանքները սկսելու համար:

<<ԿԱՊԻՏԱԼ ԴԻԶԱՅՆ>> ՍՊԸ տնօրեն Է.Դավթյան

ՀՀ, ք. Երևան, Դավթաշեն 4-րդ թաղ. 32/45
Yerevan, RA Davtashen 4th dist. 32/45

Հեռ./Tel./Тел. +37498127677

e-mail: 4davtyan4.44@gmail.com



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ Լոռու մարզ, ք.Ալավերդի, Զ.Մոր ամրոցի 8/1, Հեռ. (0253) 2 4 00
Է. փոստ alaverdimunicipality@gmail.com

N ԱՀ-722/25
26 փետրվար 2025թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ ՍԱՐԳԻՍ ԲԱԴԻՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Բաղինյան

Ի պատասխան Ձեր 21.02.2025թ. N Ե/01/494 – 25 գրության, տեղեկացնում ենք, որ Ալավերդու համայնքապետարանի համապատասխան մասնագետների կողմից և գրությամբ նշված տարածքում (համայնքի Սանահին գյուղում) իրականացվել է կառուցվող կրթահամալիրի շինարարական աշխատանքներին խոչընդոտող ծառերի և Լերդիններիս առկայության ու տեղադիրքերի ուսումնասիրություն: Իրականացված ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ նշյալ ծառերի այլ տարածքում վերատնկելու միջոցով կրթհիններիս կենսունակության ու հետագա աճի ապահովման հավանականությունը խիստ ցածր է, և գրեթե անիրականանալի:

Ելնելով վերոգրյալից, ինչպես նաև հաշվի առնելով շինության նախագծող կազմակերպության համապատասխան գրությունը, հայտնում ենք, որ Ալավերդու համայնքապետարանը նախատեսվող շինարարության մեկնարկին և հետագա ընթացքին խոչընդոտող ծառերի հատման աշխատանքներին չի առարկում՝ հատված յուրաքանչյուր ծառի փոխարեն տվյալ տարածքին հարիր երևու (հնարավորության դեպքում և ավելի) նոր ծառերի տնկման պայմանով:

Տեղեկացնում ենք նաև, որ նշյալ ծառերի հատման արդյունքում գոյացած փայտանյութը, նախատեսվում է վաճառվի տեսքով հատկացնել տվյալ բնակավայրի սոցիալապես անապահով ընտանիքների, որի կազմակերպման համար խնդրում ենք համագործակցել բնակավայրի վարչական ղեկավարի (հեռ: 091 – 59 – 27 – 24) հետ և ծառահատման աշխատանքներն իրականացնել իր անմիջական մասնակցությամբ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ

Կատ. Գրասենյակային գործերի և բնապահպանության բաժնի պետ՝ Ա. Հովհաննիսյան
/091/849449